

<<ԵՐԵՎԱՆ-ԱՌԱՂԻՏ ԿՈՆՍԱԼՏ>> ՓԲԸ

ԱՍՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծան.	2025թ.	2024թ.
		հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Հասույթ	4	98936.0	101179.0
Վաճառքի ինքնարժեք	6	(58308.0)	(69760.0)
Վարչական ծախսեր			
Համախառն շահույթ		40628.0	31419.0
Գործառնական այլ եկամուտ		144.0	572.0
Գործառնական ծախսեր	5	(24.0)	(1920.0)
Այլ ծախսեր			
Գործառնական գործունեության արդյունքները		40748.0	30071.0
Ֆինանսական եկամուտ	7	0.0	0.0
Ֆինանսական ծախսեր		0.0	0.0
Այլ ոչ գործառնական շահույթ /վնաս/, այդ թվում		(34.0)	4.0
Շահույթ նախքան շահութահարկը		40714.0	30075.0
Շահութահարկի գծով ծախս	8	(7522.0)	(5426.0)
Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս) և համապարփակ եկամուտ		33192.0	24649.0

Տնօրեն



Լ. Արտյունյան

Գլխ. հաշվապահ



Ն. Հարությունյան

20.04.2026թ.



Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ման.	2025թ.	2024թ.
		հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ			
Ներդրումային գույք	9	2058.0	2529.0
Ոչ նյութական ակտիվներ			
Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ	10	0	26
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ		0.0	0.0
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		2058.0	2555.0
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11	16356.0	20377.0
Դեբիտորական պարտքեր շահաբաժինների գծով		0.0	0.0
Կանխավճարներ և այլ ընթացիկ ակտիվներ		441.0	729.0
Դրամական միջոցներ	12	62980.0	52605.0
Ընթացիկ հարկային վճարների գծով ակտիվներ		345.0	4306.0
Այլ դեբիտորական պարտքեր		9000.0	0.0
Այլ ընթացիկ ակտիվներ		0	3
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		89122.0	78020.0
Ընդամենը ակտիվներ		91180.0	80575.0
Մեփական կապիտալ և պարտավորություններ			
Մեփական կապիտալ			
Թողարկված կապիտալ	13	2891.0	2249.0
Զբաղիված շահույթ/(վնաս)		51893.0	30900.0
Էմիսիոն եկամուտ			
Կապիտալի այլ պահուստներ			
Մեփական կապիտալի այլ տարրեր			
Ընդամենը մեփական կապիտալ		54784.0	33149.0
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Տոկոսային վարկեր և փոխառություններ		0.0	4860.0
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		0.0	4860.0
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	13266.0	21073.0
Ստացված կանխավճարներ		7126.0	5403.0
Տոկոսային վարկեր և փոխառություններ		0.0	0.0
Ընթացիկ հարկային և այլ պարտավորություններ		9842.0	13658.0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոց. Ապահ. գծով		287.0	303.0
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխ. Այլ հատկացումների գծ.		625.0	578.0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներիին		0.0	0.0
Այլ կրեդիտորական պարտքեր		5250.0	1551.0
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		36396.0	42566.0
Ընդամենը պարտավորություններ		36396.0	47426.0
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		91180.0	80575.0

Տնօրեն  Լ. Դոկյան
 Գլխ. հաշվապահ  Ն. Շարությունյան
 20.04.2026թ.

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:



Մեխանիկական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Թուրքիական կապիտալ	Զբաղիված շահույթ	Էմիսիան Էկամուտ	Կապիտալի այլ պահուստներ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Շտրամներ
	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Մնացորդը առ 01 հունվարի 2024թ.	2249	13,772				16,021
Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսերի գծով						0.0
Շահույթ/(վնաս) և այլ հաստատարիական շահաբաժիններ		24499				24499
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	2249	30900				33149
Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսերի գծով	642.0					
Շահույթ/(վնաս) և այլ հաստատարիական Էկամուտ տարվա համար		33193				642.0
Շահաբաժիններ		12200				33193
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	2891	51893				12200
						54784

Լ. Դոնյան

Ն. Հարությունյան

Տուրքեն

Գլխ. հաշվապահ

20.04.2026թ.



Ֆինանսավորման հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսավորման հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:


Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Օան.	2025թ.		2024թ.	
	հազ.	ՀՀ դրամ	հազ.	ՀՀ դրամ
Գործառնական գործունեություն				
Հաճախորդներից ստացված դրամական միջոցների մուտքեր		123498.6		105229.8
Այլ գործառն. գործունեությունից դրամ. միջոցների մուտքեր		162.6		71.9
Մատակարարներին վճարումներ		(19837.2)		(11740.6)
Աշխատակիցներին վճարումներ		(38093.7)		(33679.8)
Ստացված տոկոսներ				
Վճարված տոկոսներ				
Վճարված հարկեր, տուրքեր		(35415.3)		(28099.0)
Այլ գործառն. գործունեությունից դրամ. միջոցների ելքեր		(3521.7)		(492.4)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		26793.3		31289.9
Ներդրումային գործունեություն				
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից				
Հիմնական միջոցների ձեռքբերում		0.0		(559.0)
Ստացված տոկոսներ		0.0		0.0
Ներդրում բաժնետերերից		0.0		0.0
Ոչ նյութական ակտիվների գնում		642.0		0.0
Ակտիվներին վերաբերվող շնորհների ստացում		(0.0)		(0.0)
Զուտ դրամական միջոցների հոսքեր օգտագործված ներդրումային գործունեությունում		642.0		(559.0)
Ֆինանսական գործունեությունից				
Փոխառություն		0.0		0.0
Մուտքեր ավանդի դիմաց ստացված տոկոսային եկամտից		0.0		0.0
Մարված փոխառություններ		(4860.5)		(34000.0)
Սեփականատերերին վճարած շահաբաժիններ		(12200.0)		(0.0)
Զուտ դրամական միջոցների հոսքեր ստացված/ (օգտագործված) ֆինանսական գործունեությունից		(17060.5)		(34000.0)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/(նվազում)		10374.8		3269.1
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցներին և նրանց համարժեքներին				
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի		52605.0		55007.0
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	17	62980.0		52605.0

Տնօրեն
Գլխ. հաշվապահ
20.04.2026թ.

Լ. Ղուկյան
Ն. Հարությունյան



Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Տեղեկատվություն ընկերության մասին

<<Երևան-Աուդիտ Կոնսալտ>> ՓԲ Ընկերությունը հիմնադրվել է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոն տարածքային բաժնի կողմից <<17>> օգոստոսի 2007թ-ի: Պետական գրանցման համար՝ 286.120.06569, պետական ռեգիստրի գրանցման վկայական թիվ՝ 03Ա. 077437: Ընկերությունը համարվում է առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ., ք. Երևան, Բրյուսովի 26, գործունեության հասցե՝ ՀՀ., ք. Երևան, Օրբելի 45: ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության կողմից Աուդիտորական գործունեության լիցենզիա ԱՕ՝ N 052, սրված 24 սեպտեմբերի 2007թ.:

2.1 Հաշվետվության պատրաստման հիմքերը

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՓՄԿ ՖՀՄՍ) համապատասխան, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա՝ բացառությամբ հողամասերի և շենքերի:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար (1000 դրամ), եթե այլ բան նշված չէ:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակելի մասերի ամփոփ նկարագիր

Ընկերությունը իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառել է հաշվապահական հաշվառման քաղաքականության հետևյալ նշանակալի մասերը.

2.2.1 Արտարժույթի փոխարկում

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է կազմակերպության ֆունկցիոնալ արժույթ:

Արտարժույթով գործարքները սկզբնապես հաշվառվում են Ընկերության կողմից ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով սահմանված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող ֆունկցիոնալ արժույթի փոխանակման սիմոթ փոխարժեքով:

Բոլոր տարբերությունները ներառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են պատմական արժեքով արտարժույթով վերահաշվարկվում են՝ օգտագործելով սկզբնական գործարքի ամսաթվի դրությամբ փոխարժեքները: Արտարժույթով իրական արժեքով չափվող ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքները: Ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացող օգուտները և վնասները ճանաչվում են փոխարժեքային տարբերություններ առաջացնող հոդվածի օգուտների և վնասների հետ միասին (այն հոդվածների վերահաշվարկման տարբերությունները, որոնց օգուտը կամ վնասը ճանաչվում է այլ ֆինանսական արդյունքներում շահույթ/վնասում):

2.2.2 Հասույթի ճանաչում

Հասույթը ճանաչվում է այն չափով, որքանով հավանական է, որ ապագա տնտեսական օգուտներ կհոսեն դեպի Ընկերություն, և այդ հասույթը կարելի է արժանահավաստորեն չափել՝ անկախ այն փաստից, թե երբ է վճարումը կատարվել: Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով պայմանագրով սահմանված վճարման պայմանները և բացառելով հարկերն ու տուրքերը:

2.2.3 Հարկեր

Ընթացիկ շահութահարկ

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ընթացիկ շահանակաշրջանի շահութահարկի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն գումարով, որը ակնկալվում է ստանալ հարկային մարմիններից կամ վճարել հարկային մարմիններին: Հարկերի դրույքների և հարկերի գումարների հաշվարկման համար օգտագործվող օրենքներն, այն օրենքներն են, որոնք կիրառվել կամ սահմանվել են հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ-ում:

Իրացումից հարկեր (Ավելացված արժեքի հարկ/ԱԱՀ)

Հասույթը, ծախսերը և ակտիվները ճանաչվում են գուտ իրացման հարկերից՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

- Երբ իրացման հարկն առաջացել էր այնպիսի ակտիվների կամ ծառայությունների գնումից, որի գծով այն չի հատուցվում հարկային մարմինների կողմից, այս դեպքում հարկը ճանաչվում է որպես ակտիվի ձեռքբերման ինքնարժեքի մաս կամ որպես ծախսային հոդված համապատասխանաբար,
- Դեբիտորական և կրեդիտորական պարտքերն արտացոլելիս, որոնք ներկայացված են իրացման հարկերի գումարը ներառյալ:

Հարկային մարմիններից հատուցման ենթակա կամ պարտավորություն հանդիսացող իրացման հարկերի գծով գումարները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես դեբիտորական կամ կրեդիտորական պարտք:

Հետաձգված հարկ

- Հետաձգված հարկը հաշվառվում է պարտավորությունների մեթոդով հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների հարկային բազաների և դրանց ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվեկշռային արժեքների ժամանակավոր տարբերությունների հիման վրա: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ երբ հետաձգված հարկային պարտավորությունը առաջանում է գույվիլի կամ ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հետ կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների դեպքում, որտեղ ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամանակահատվածը կարող է վերահսկվել և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերի և չօգտագործված հարկային վնասների համար այնքանով, որքանով հավանական է, որ կլինի հարկվող շահույթ, որի դիմաց այդ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները և տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերը և վնասները հնարավոր կլինի օգտագործել՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

- երբ նվազեցվող ժամանակավոր տարբերություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվը առաջանում է ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների գծով նվազեցվող ժամանակավոր տարբերություններից հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները կհակադարձվեն տեսանելի ապագայում և կլինի հարկվող շահույթ, որի դիմաց հնարավոր կլինի օգտագործել ժամանակավոր տարբերությունները:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում է այնքանով, որքանով այլևս հավանական չէ, որ բավարար հարկվող շահույթ կլինի, որի դիմաց կօգտագործվի հետաձգված հարկային ակտիվը: Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում այնքանով, որքանով հավանական է, որ ապագա հարկվող շահույթը թույլ կտա վերականգնել հետաձգված հարկային ակտիվը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն այն տարում, երբ ակտիվները կիրացվեն կամ պարտավորությունները

կմարվեն՝ հիմնվելով հաշվետու ամսաթվի դրությամբ կիրառված կամ կիրառման ենթակա օրենքով սահմանված հարկային դրույքաչափերի (և հարկային օրենքների) վրա:

Շահույթի կամ վնասի կազմում չճանաչված հոդվածների գծով ճանաչված հետաձգված հարկը նույնպես ճանաչվում է շահույթի կամ վնասի կազմից դուրս: Հետաձգված հարկային հոդվածները ճանաչվում են դրան վերաբերող գործարքներին գուգահեռ՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ անմիջապես սեփական կապիտալում:

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա իրավաբանորեն ամրագրված իրավունք ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների նկատմամբ հաշվանցելու, և հետաձգված հարկերը վերաբերում են մինևայն հարկվող կազմակերպությանը և հարկային մարմիններին:

Որպես ձեռնարկատիրական գործունեության միավորման մաս՝ ձեռքբերված հարկային օգուտները, որոնք այդ ամսաթվի դրությամբ չեն բավարարում առանձին ճանաչման չափանիշներին, ճանաչվում են հետագայում, փաստերի և իրողությունների փոփոխությունների վերաբերյալ նոր տեղեկատվության ակայության դեպքում: Ճշգրտումը դիտարկվում է որպես նվազեցում գույզվիլից (քանի դեռ այն չի գերազանցում գույզվիլի արժեքը), եթե այն վերաբերվում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սկզբնական հաշվառման պահին, կամ՝ արտացոլվում է շահույթում կամ վնասում:

2.2.4 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ զուտ կուտակված մաշվածությունից և/կամ արժեզրկումից կուտակված կորուստներից, եթե կան այդպիսիք: Սկզբնական արժեքն իր մեջ ներառում է հիմնական միջոցի փոխարինվող մասերի ծախսումները, երկարաժամկետ շինարարական նախագծերի փոխառության ծախսումները՝ ճանաչման չափանիշներին բավարարելու դեպքում: Երբ հիմնական միջոցի նշանակալի մասերը անհրաժեշտ է պարբերաբար փոխարինել, Ընկերությունը ապաճանաչում է փոխարինված մասը և ճանաչում նոր մասն իր օգտակար ծառայության ժամկետով և մաշվածությամբ: Նմանապես, երբ իրականացվում են լայնածավալ ստուգումներ, ապա այդ ծախսումը ճանաչվում է հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում որպես փոխարինում՝ ճանաչման չափանիշներին բավարարելու դեպքում: Բոլոր այլ վերանորոգման և սպասարկման ծախսումները առաջանալու պահին ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ակտիվի օգտագործումից հետո ակնկալվող ապագործարկման ծախսումների ներկա արժեքը ներառվում է համապատասխան ակտիվի արժեքում՝ պահուստի ճանաչման չափանիշներին բավարարելու դեպքում:

Չողմանաբ և շենքերը չափվում են իրական արժեքով՝ հանած վերագնահատման ամսաթվից հետո ճանաչված կուտակված մաշվածությունը շենքերի համար և արժեզրկումից կորուստները: Գնահատումներն իրականացվում են բավարար հաճախականությամբ, որպեսզի վերագնահատված ակտիվի իրական արժեքը էապես չտարբերվի իր հաշվեկշռային արժեքից:

Վերագնահատումից արժեքի ցանկացած աճ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կուտակվում սեփական կապիտալի ակտիվի վերագնահատումից պահուստում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն հակադարձում է նույն ակտիվի գծով վերագնահատումից նվազումը, որը նախկինում ճանաչվել էր ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ինչի դեպքում աճը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վերագնահատումից նվազեցումը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի և միայն այն մասով, որը հաշվանցում է ակտիվի վերագնահատման պահուստում ճանաչված նույն ակտիվի գծով վերագնահատումից աճը:

Ակտիվի վերագնահատման պահուստից տարեկան տեղափոխությունը չբաշխված շահույթ իրականացվում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերության մասով: Բացի այդ, կուտակված մաշվածությունը վերագնահատման ամսաթվի դրությամբ բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և զուտ գումարը վերաներկայացվում է ակտիվի վերագնահատված գումարի չափով: Օտարման դեպքում վաճառվող ակտիվի գծով վերագնահատման ցանկացած պահուստ տեղափոխվում է չբաշխված շահույթ:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, որը սահմանվում է հետևյալ չափով՝

- Հումակարգչային տեխնիկա – 1 տարի
- Տնտեսական գույք – 8 տարի:

Սկզբնապես ճանաչված հիմնական միջոցի միավոր և ցանկացած էական մաս ապաճանաչվում է օտարման դեպքում և երբ ակտիվի օգտագործումից կամ օտարումից ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում: Ակտիվի ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտ կամ վնաս (հաշվարկված որպես օտարումից զուտ մուտքերի/հաստույցների և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն) ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ակտիվների մնացորդային արժեքները< օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության մեթոդները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում առաջընթաց:

Ակտիվների արժեզրկում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար դիտարկում է յուրաքանչյուր ակտիվը կամ դրամաստեղծ միավորը՝ պարզելու, արդյոք առկա է արժեզրկման որևէ հայտանիշ: Արժեզրկման հայտանիշների առկայության դեպքում կատարվում է փոխհատուցվող գումարի ֆորմալ հաշվարկ, որն իրենից ներկայացնում է իրական արժեքից հանած վաճառքի համար անհրաժեշտ ծախսումների և օգտագործման արժեքի առավելագույնը: Այս արժեքները պահանջում են այնպիսի գնահատումների և ենֆադրությունների օգտագործում, ինչպիսիք են ապրանքների երկարաժամկետ գները (հաշվի առնելով ընթացիկ և պատմական գները, գնային տրենդները և համապատասխան գործոնները), զեսչման դրույքները, գործառնական ծախսերը, ապագա կապիտալի ծախսումների պահանջները, փակման և վերականգնման ծախսումները, հետախուզման ներուժը և գործունեության արդյունքները: Այս գնահատումները և ենֆադրությունները ենթական են ռիսկի և անորոշության: Այդ իսկ պատճառով հնարավոր է, որ հանգամանքների փոփոխությունը կանդրադառնա այդ կանխատեսումների վրա, ինչը կարող է անդրադառնալ ակտիվների և/կամ դրամաստեղծ միավորների փոխհատուցվող գումարների վրա:

Իրական արժեքը սահմանվում է որպես իրագել և պատրաստակամ անկախ կողմերի միջև առևտրային գործարքի արդյունքում ակտիվի վաճառքից ստացվելիք գումար: Հանածոների իրական արժեքը սովորաբար հաշվարկվում է որպես ակտիվի շարունակական օգտագործումից ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեք՝ ներառյալ ապագա ընդլայնման ծրագրերի և վերջնական օտարման ծախսումների գնահատումները՝ օգտագործելով շուկայի անկախ մասնակիցների կողմից հաշվի առնվող ենֆադրությունները: Դրամական միջոցների հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով այնպիսի զեղչման դրույք, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և տվյալ ակտիվին հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

2.2.5 Վարձակալություն

Որոշելու համար, արդյոք, համաձայնությունը համարվում է կամ իր մեջ պարունակում է վարձակալություն, պետք է ուշադրություն դարձնել էությանը համաձայնության սկզբի դրությամբ: Գնահատվում է, արդյոք համաձայնության կատարումը կախված է որոշակի ակտիվի կամ ակտիվների օգտագործումից, թե համաձայնությունը փոխանցում է ակտիվը կամ ակտիվներն օգտագործելու իրավունք, նույնիսկ, եթե այդ իրավունքը բացահայտորեն նշված չէ համաձայնությունում:

Ընկերությունը որպես վարձակալ

Ֆինանսական վարձակալությունը, որը վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցում է Ընկերությանն, կապիտալացվում է վարձակալության մեկնարկի ամսաթվին վարձակալված գույքի իրական արժեքով կամ, եթե ավելի փոքր է, նվազագույն վարձակալական վճարների ներկա արժեքով: Վարձավճարները բաշխվում են ֆինանսական ծախսերի և վարձակալական պարտավորությունների նվազեցմանը այնպես, որ ստացվի հաստատուն տոկոսադրույք պարտավորությունների

մնացորդի նկատմամբ: Ֆինանսական ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսեր հոդվածում:

Վարձակալված գույքի համար հաշվարկվում է մաշվածություն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Այն դեպքում, երբ չկա ուղղակիտ հավաստիացում, որ Ընկերությունը վարձակալության ժամկետի ավարտին կստանա սեփականության իրավունք, ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության ժամկետից նվազագույնով:

Գործառնական վարձակալության գծով վճարումները ճանաչվում են որպես գործառնական ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով վարձակալական ժամկետի ընթացքում:

Ընկերությունը որպես վարձատու

Գույքի վարձակալությունը, երբ ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները չեն փոխանցվում վարձակալին, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով բանակցությունների ընթացքում առաջացող սկզբնավորման ուղղակի ծախսումները գումարվում են վարձակալված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում վարձակալական

ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ժամկետի ընթացքում այնպես, ինչպես վարձակալական եկամուտը: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես հասույթ այն ժամանակաշրջանում, որում դրանք վաստակվում են:

2.2.6 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, և որոնց անհրաժեշտ է ժամանակի զգալի հատված նախատեսված օգտագործմանը կամ վաճառքին պատրաստ լինելու համար, կապիտալացվում են որպես ակտիվի սկզբնական արժեքի մաս: Փոխառության մնացած բոլոր ծախսումները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, որում առաջանում են: Փոխառության ծախսումները բաղկացած են տոկոսից և այլ ծախսումներից, որը կազմակերպությունը կրում է կապված փոխառու միջոցների ստացման հետ:

2.2.7 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով՝ ներառյալ գործարքի ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը հաշվառվում է իրական արժեքով, որն արտացոլում է հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական պայմանները: Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխությունից օգուտները և վնասները, այդ թվում համապատասխան հարկային ազդեցությունը, ներառվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում առաջանում են: Իրական արժեքները որոշվում են հավատարմագրված արտաքին անկախ գնահատողի կողմից տարեկան կտրվածքով իրականացվող գնահատման հիման վրա կիրառելով Գնահատման միջազգային ստանդարտների կոմիտեի կողմից առաջարկվող գնահատման մոդելը:

Ներդրումային գույքն ապաճանաչվում է, երբ այն օտարվում է, կամ դուրս է գալիս շահագործումից և այդ օտարումից ոչ մի ապագա տնտեսական օգուտ չի ակնկալվում: Ակտիվի գծով օտարումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ապաճանաչման ժամանակաշրջանում:

Ներդրումային գույքից կամ ներդրումային գույքին կատարվում են վերադասակարգումներ միայն այն դեպքում, երբ դրա օգտագործման եղանակի մեջ փոփոխություն է տեղի ունեցել: Ներդրումային գույքից դեպի սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույք փոխանցման դեպքում հետագա հաշվառման համար ելակետային արժեքը օգտագործման եղանակի փոփոխության ամսաթվի դրությամբ իրական արժեքն է: Եթե սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույքը դառնում է ներդրումային, Հնկերությունը հաշվառում է նման գույքը հիմնական միջոցների հաշվառման քաղաքականության համաձայն մինչև օգտագործման եղանակի փոփոխության ամսաթիվը:

2.2.8 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, սկզբնապես չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցված կուտակված մաշվածություն կամ արժեզրկումից կուտակված կորուստներ, եթե կան այդպիսիք: Սեփական ռեսուրսների հաշվին ստեղծված ոչ նյութական ակտիվները, բացի կապիտալացված մշակման ծախսումներից, չեն կապիտալացվում և ծախսերն արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն տարում, երբ ծախսն առաջանում է:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունները գնահատվում են որպես որոշակի կամ անորոշ:

Որոշակի օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են օգտակար տնտեսական ծառայության ժամկետի ընթացքում և գնահատվում է դրանց արժեզրկումը, եթե առկա են հայտանիշներ, որ ոչ նյութական ակտիվը կարող է արժեզրկված լինել: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվի ամորտիզացիայի ժամկետը և ամորտիզացիայի մեթոդը վերանայվում են նվազագույնը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի կամ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպառման մոդելի փոփոխությունները հաշվառվում են՝ փոփոխելով համապատասխանաբար ամորտիզացիոն ժամկետը կամ մեթոդը, և դիտվում են որպես հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի ծախսը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այն ծախսերի դասում, որը համապատասխանում է ոչ նյութական ակտիվի գործառնական նշանակությանը:

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Անորոշ օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն տարեկան ստուգվում է դրանց արժեքը կամ առանձին կամ դրամաստեղծ միավորի մակարդակով: Անորոշ ժամկետի գնահատումը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ որոշելու արդյոք անորոշ ժամկետը շարունակվում է ողջամիտ մնալ: Եթե ոչ, ապա օգտակար ծառայության ժամկետը փոփոխվում և դառնում է որոշակի առաջընթաց կիրառմամբ:

Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից գուտ ներհոսքի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

2.2.9 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Յուրաքանչյուր արտադրանքի ներկա գտնվելու վայր և վիճակին հասցնելու հետ կապված ծախսումները հաշվառվում են հետևյալ կերպ.

Հումք՝

- գնման արժեքը առաջին մուտք առաջին ելք սկզբունքով,

Պատրաստի և անավարտ արտադրանք

ուղղակի հումքի, աշխատանքային ծախսումների և արտադրական վերադրումների համամասնությունը՝ ելնելով արտադրական հզորությունների նորմալ մակարդակից, բացառությամբ՝ փոխառության ծախսումների:

Պաշարների սկզբնական արժեքը ներառում է համապատասխան հումքի ձեռքբերման գծով դրամական միջոցների հոսքերի հեջավորման օգուտների և վնասների տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքներից:

Իրացման գուտ արժեքը կազմակերպության սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համարման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:

2.2.10 Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտավորություն որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և այդ պարտավորությունը կարելի է արժանահավատորեն չափել: Երբ Ընկերությունն ակնկալում է, որ պահուստն ամբողջությամբ կամ դրա մի մասը կփոխհատուցվի, օրինակ՝ ապահովագրական պայմանագրի շրջանակներում, փոխհատուցման գումարը ճանաչվում է որպես առանձին ակտիվ, բայց միայն այն դեպքում, երբ փոխհատուցումը ըստ էության որոշակի է: Պահուստին վերաբերող ծախսերը ներկայացվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ գուտ ցանկացած փոխհատուցումից:

2.2.11 Ֆինանսական գործիքներ

ՀՀՄՍ 39-ի գործողության ոլորտում ընկած ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ կամ, համապատասխանության դեպքում, արդյունավետ հեջում որպես հեջավորման գործիքներ նախատեսված ածանցյալ գործիքներ: Ընկերությունը որոշում է ֆինանսական ակտիվի դասակարգումը սկզբնական ճանաչման ժամանակ:

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով գումարած՝ գործարքի ծախսումները, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից:

Այն ֆինանսական ակտիվների գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվների մատակարարում շուկայում գործող կարգավորմամբ կամ գործարար սովորույթով սահմանված ժամանակահատվածում (կանոնավոր կերպով առուվաճառք) ճանաչվում է առևտրի ամսաթվին, այսինքն՝ այն օրը, երբ Ընկերությունը պարտավորվում է գնել կամ վաճառել ակտիվը:

Հետագա չափումը

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը կախված է ֆինանսական ակտիվի դասից ըստ ստորև ներկայացվածի.

ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական ակտիվներ չափվող իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են առևտրային
նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ և ֆինանսական ակտիվներ, որոնք սկզբնապես նախատեսվել են
որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են
որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ժամանակում վաճառելու կամ հետ
գնվելու նպատակով: Ածանցյալ գործիքները, ներառյալ առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները, ևս
դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք նախատեսված չեն որպես
արդյունավետ հեջավորման գործիքներ, ինչպես նկարագրված է ՀՀՄՍ 39-ում:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ֆինանսական վիճակի
մասին հաշվետվության մեջ հաշվառվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքի գուտ փոփոխությունները
ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական ծախս (իրական
արժեքի գուտ բացասական փոփոխություններ) կամ ֆինանսական եկամուտ (իրական արժեքի գուտ դրական
փոփոխություններ):

Սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող
նախատեսված ֆինանսական ակտիվները նախատեսվում են սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ
միայն այն դեպքում, երբ ՀՀՄՍ 39-ի սահմանած չափանիշները բավարարված են: Ընկերությունը չի նախատեսել
որևէ ֆինանսական ակտիվ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ընկերությունը դիտարկում է առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները, բացառությամբ
ածանցյալ գործիքների, որոշելու արդյոք ք մոտ ապագայում վաճառելու նպատակը դեռ տեղին է: Երբ հազվադեպ
դեպքերում Ընկերությունը հնարավորություն չի ունենում վաճառել այդ ֆինանսական ակտիվները ակտիվ
շուկայի բացակայության պատճառով, և տեսանելի ապագայում դրանք վաճառելու ղեկավարության
մտադրությունը էապես փոխվում է, Ընկերությունը կարող է վերադասակարգել այդ ֆինանսական ակտիվները:
Վերադասակարգումը փոխառությունների կամ դեբիտորական պարտքերի, վաճառքի համար մատչելի կամ

մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների կախված է ակտիվի բնույթից: Այս դիտարկումը չի ազդում այն
ֆինանսական ակտիվների վրա, որոնք սկզբնապես նախատեսվել են որպես ֆինանսական ակտիվ՝ շահույթի
կամ վնասի միջոցով չափվող օգտագործելով նախատեսման պահին այդ դասակարգման հնարավորությունը,
քանի որ տվյալ գործիքները չեն կարող վերադասակարգվել սկզբնական ճանաչումից հետո:

Հիմնական պայմանագրերում ներառված պարունակվող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես
առանձին ածանցյալ գործիքներ և գրանցվում են իրական արժեքով, եթե դրանց տնտեսական բնութագրերը և
ոլիկերը սերտորեն կապված չեն հիմնական պայմանագրերի բնութագրերին և ոլիկերին և հիմնական
պայմանագրերը չեն պահվում առևտրային նպատակով կամ չեն նախատեսվում որպես շահույթի կամ վնասի
միջոցով իրական արժեքով չափվող գործիքներ: Այս պարունակվող ածանցյալ գործիքները չափվում են իրական
արժեքով, իսկ իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Գնահատման
վերանայումը տեղի է ունենում միայն, եթե առկա է փոփոխություն պայմանագրի պայմաններում, որն էապես
փոխում է դրամական հոսքերը:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են ֆիքսված կամ
որոշակի վճարումներով, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում: Սկզբնական չափումից հետո այդպիսի
ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով
արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը հանելով արժեքկումը: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է
հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած զեղչ կամ հավելվածար, ինչպես նաև վճարներ կամ
ծախսումներ, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույթի մաս: Արդյունավետ տոկոսադրույթով
հաշվարկված ամորտիզացիան ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության
ֆինանսական եկամուտներում: Արժեքկումից առաջացած կորուստները ճանաչվում են ֆինանսական
արդյունքների մասին հաշվետվությունում՝ փոխառությունների գծով ֆինանսական ծախսերում, իսկ
դեբիտորական պարտքերի գծով՝ վաճառքի ինքնարժեքում կամ այլ գործառնական ծախսերում:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Ֆիքսված կամ որոշակի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետներով ոչ ածանցյալ ֆինանսական
ակտիվները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Ընկերությունն ունի
մտադրություն և հնարավորություն դրանք պահելու մինչև մարմանը: Սկզբնական չափումից հետո մինչև
մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով
արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ նվազեցնելով արժեքկումը: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում
է հաշվի առնելով ձեռքբերման ցանկացած զեղչ կամ հավելվածար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ,
որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույթի բաղկացուցիչ մաս: Արդյունավետ տոկոսադրույթի
ամորտիզացիան ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական
եկամուտ: Արժեքկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին
հաշվետվությունում որպես ֆինանսական ծախս: Ընկերությունը չի ունեցել մինչև մարման ժամկետը պահվող
ներդրումներ:

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական
հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումները ներառում են բաժնային և պարտքային գործիքներ: Վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնային ներդրումները այն ներդրումներն են, որոնք չեն դասակարգվել որպես առևտրային նպատակով պահվող կամ նախատեսվել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Այս դասի պարտքային գործիքները այն գործիքներն են, որոնց կազմակերպությունը նախատեսում է պահել անորոշ ժամկետով և որոնք կարող են վաճառվել՝ ելնելով իրացվելիության անհրաժեշտությունից կամ շուկայական պայմանների փոփոխությունից:

Սկզբնական ճանաչումից հետո վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումները հետագայում չափվում են իրական արժեքով, չիրացված օգուտները և վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով պահուստում այնքան ժամանակ, մինչև ներդրումը ապաճանաչվի, որի դեպքում կուտակված օգուտը կամ վնասը ճանաչվում է այլ գործառնական եկամուտներում, կամ ներդրումը որոշվի որպես արժեզրկված, որի դեպքում կուտակված վնասը վերադասակարգվում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով պահուստից ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսերին: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումները պահելու ընթացքում առաջացած տոկոսները հաշվառվում են որպես տոկոսային եկամուտ՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ընկերությունը գնահատում է, արդյոք, մոտ ապագայում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները վաճառելու հնարավորությունը և մտադրությունը դեռևս տեղին է: Հազվադեպ դեպքերում, երբ

Ընկերությունը չի կարողանում վաճառել այդպիսի ֆինանսական ակտիվները ակտիվ շուկայի բացակայության պատճառով և տեսանելի ապագայում դրանք վաճառելու դեկավարության մտադրությունը էապես փոխվում է, Ընկերությունը կարող է վերադասակարգել այդ ֆինանսական ակտիվները: Փոխառություններ և դեբիտորական պարտքեր վերադասակարգումը թույլատրվում է, երբ ֆինանսական ակտիվները համապատասխանում են փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը և Ընկերությունն ունի մտադրություն և հնարավորություն պահելու այդ ակտիվները տեսանելի ապագայում կամ մինչև մարում: Մինչև մարման ժամկետը պահվող վերադասակարգումը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ Ընկերությունն ունի հնարավորություն և մտադրություն այդ ակտիվները համապատասխանաբար պահելու:

Վաճառքի համար մատչելի դասից վերադասակարգված ֆինանսական ակտիվների համար վերադասակարգման ամսաթվի դրությամբ իրական արժեքով որոշված հաշվեկշռային արժեքը դառնում է իր նոր ամորտիզացված արժեքը և ցանկացած նախկին օգուտ կամ վնաս, որը ճանաչվել էր սեփական կապիտալում, ամորտիզացվում է շահույթում կամ վնասում ներդրման մնացած ժամկետի ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքը: Նոր ամորտիզացված արժեքի և մարման գումարի միջև ցանկացած տարբերություն ևս ամորտիզացվում է ակտիվի մնացած ժամկետի ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքը: Եթե ակտիվը հետագայում որոշվում է որպես արժեզրկված, ապա սեփական կապիտալում հաշվառված գումարը վերադասակարգվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ, եթե կիրառելի է ֆինանսական ակտիվի մասը կամ ֆինանսական ակտիվների Ընկերության մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքի ժամկետն ավարտված է,
- Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ փոխանցման համաձայնագրի համաձայն պարտավորվում է վճարել ստացված բոլոր դրամական հոսքերը առանց էական ուշացման երրորդ կողմին տարանցիկ համաձայնությամբ, և, կամ (ա) Ընկերությունը փոխանցել է ակտիվի գծով ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները, կամ (բ) Ընկերությունը ոչ փոխանցել է և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների Ընկերության՝ արժեզրկված լինելու անկողմնակալ վկայության գնահատում: Ֆինանսական ակտիվը կամ ակտիվների Ընկերությունը համարվում են արժեզրկված այն և միայն այն դեպքում, եթե կա արժեզրկման անկողմնակալ վկայության, որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («կորուստներ վկայող իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվից կամ ակտիվների Ընկերությանց ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել: Արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել վարկառուի կամ վարկառուների Ընկերության զգալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման ուշացումը կամ չվճարումը, այն հավանականությունը, որ տեղի կունենա սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմավորում, ինչպես նաև դիտարկվող տեղեկատվությունն ակնկալվող ապագա դրամական հոսքերի

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

չափերի նվազման վերաբերյալ, օրինակ տնտեսական պայմանների փոփոխություն, որոնք կարող են հանգեցնել ձախողումների:

Ֆինանսական պարտավորություններ

Սկզբնական ճանաչումը և չափումը

ՀՀՄՍ 39-ի գործողության ոլորտում գտնվող ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, վարկեր և փոխառություններ, կամ համապատասխանության դեպքում ածանցյալ գործիքներ նախատեսված որպես հեջավորման գործիք արդյունավետ հեջում: Ընկերությունը դասակարգում է ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման ժամանակ:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի ու փոխառությունների պարագայում՝ ուղղակի վերագրելի գործարքի ծախսումներից գուտ:

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, բանկային օվերդրաֆտները, վարկերը և փոխառությունները, ֆինանսական երաշխավորության պայմանագրերը և ածանցյալ ֆինանսական գործիքները:

Հետագա չափումը

Ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը կախված է դասակարգումից ըստ ստորև ներկայացվածի.

Ֆինանսական պարտավորություններ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական պարտավորությունները և այն ֆինանսական պարտավորությունները, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսվել են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ապագայում վաճառելու նպատակով: Այս դասը ներառում է այն ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք նախատեսված չեն որպես հեջավորման գործիքներ հեջավորման հարաբերություններում՝ ինչպես դա սահմանված է ՀՀՄՍ 39 ստանդարտով: Առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները նույնպես դասակարգված են որպես վաճառքի համար պահվող, եթե դրանք չեն նախատեսվել որպես արդյունավետ հեջավորման գործիքներ:

Առևտրային նպատակով պահվող պարտավորությունների գծով օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Սկզբնական ճանաչման ժամանակ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող նախատեսված ֆինանսական պարտավորությունները նախատեսվում են սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ՝ միայն ՀՀՄՍ 39 ստանդարտի չափանիշները բավարարելու դեպքում: Ընկերությունը չի նախատեսել որևէ ֆինանսական պարտավորություն որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Վարկեր և փոխառություններ

Սկզբնական ճանաչումից հետո տոկոսային վարկերն ու փոխառությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ պարտավորություններն ապաճանաչվում են, ինչպես նաև արդյունավետ տոկոսադրույքով ամորտիզացնելիս:

Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած զեղչ կամ հավելվածար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ, որոնք հանդիսանում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս: Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված ամորտիզացիան ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսեր հոդվածում:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Ընկերության կողմից թողարկված ֆինանսական երաշխավորության պայմանագրերը այն պայմանագրերն են, ըստ որոնց պահանջվում է կատարել վճարում փոխհատուցելու պարտատիրոջ վնասները, որոնք առաջացել են այն պատճառով, որ տվյալ պարտատերը չի կատարել վճարում պարտքային գործիքի պայմանների համաձայն: Ֆինանսական երաշխավորության պայմանագիրը սկզբնապես ճանաչվում է որպես պարտավորություն իրական արժեքով՝ ճշգրտված երաշխավորության թողարկմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի ծախսումներով: Հետագայում պարտավորությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից առավելագույնով՝ հաշվետու ամսաթվի դրությամբ ներկա պարտավորությունը մարելու համար անհրաժեշտ ծախսի լավագույն գնահատական և սկզբնապես ճանաչված գումար՝ նվազեցված կուտակված ամորտիզացիան:

Ապաճանաչում

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծախսագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը:
 Նույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորության փոխարինումը այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել է գործող պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա պետք է հին պարտավորությունը ապաճանաչել և նոր պարտավորությունը ճանաչել: Համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

2.3 Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում
3 Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ՖՀՄՄ-երին համապատասխան ղեկավարությունից պահանջում է կիրառել դատողությունների, ենթադրություններ և գնահատումներ, որոնք ազդում են հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական հաշվետվություններում ակտիվների, պարտավորությունների գումարների և պայմանական պարտավորությունների բացահայտման վրա, և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հասույթների և ծախսերի մեծության վրա: Գնահատումներին ու ենթադրություններն անընդհատ դիտարկվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա ներառյալ այն սպասումները, որոնք կիրառվեն որոշակի պայմանների դեպքում: Այնուամենայնիվ, իրական արդյունքները կարող են տարբերվել այս գնահատումներից, եթե տարբեր ենթադրություններ կիրառվեն կամ տարբեր պայմաններ գոյություն ունենան:

4. Հասույթ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
	<u>հազ. ՀՀ դրամ</u>	<u>հազ. ՀՀ դրամ</u>
Ծառայությունների մատուցումից հասույթ 20% ԱԱՀ	94216.6	95,779.2
Ծառայությունների մատուցումից հասույթ 0 % ԱԱՀ	150.0	0.0
Ծառայությունների մատուցումից հասույթ ազատված ԱԱՀ	4570.0	5400.0
Ընդամենը	98936.6	101179.2

5. Գործառնական ծախսեր

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
	<u>հազ. ՀՀ դրամ</u>	<u>հազ. ՀՀ դրամ</u>
Ծախսեր տույժերից և տուգանքներից	0.0	0.0
Գործառնական այլ ծախսեր	24.0	0.0
Անհուսալի դեբիտորական պարտքեր	0.0	1920.0
Ընդամենը գործառնական ծախսեր	24.0	1920.0

6. Վարչական ծախսեր

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
	<u>հազ. ՀՀ դրամ</u>	<u>հազ. ՀՀ դրամ</u>
Աշխատավարձ	35874.4	32538.0
Կոմունալ ծառայություններ և գրասենյակային ծախսեր	1753.3	2958.0
Մարկետինգի և գովազդի ծախսեր	740.3	367.0
Կադրերի պատրաստման ծախսեր	0.0	0.0
Փոստի և կապի ծառայությունների գծով ծախսեր	418.6	402.0
Գործուղման և ներկայացուցչական	2893.4	644.0
Բանկային ծառայությունների վճարներ	34.8	29.0
Մաշվածություն և ամրոտիզացիա	805.3	2176.0
Հարկերի գծով ծախսեր	712.5	988.0
Աուդիտորական և խորհրդատվական	0.0	16250.0
Վարձակալական ծախսեր	7564.4	6244.0
Այլ ծախսեր	7511.0	7164.0
Ընդամենը վարչական ծախսեր	58308.0	69760.0

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների քաղկագուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

8. Շահութահարկ

2025 և 2024թթ. Դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների շահութահարկի գծով ծախսի տարրերն են.

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

	2025թ. հազ. ՀՀ դրամ	2024թ. հազ. ՀՀ դրամ
<i>Ընթացիկ շահութահարկ`</i>		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	7522.0	5426.6
Նախորդ տարվա ընթացիկ շահութահարկի գծով ճշգրտումներ		
<i>Հետաձգված հարկ`</i>		
Ժամանակավոր տարբերությունների առաջացմանը կամ հակադարձմանը վերաբերող		
<i>Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված</i>		
<i>շահութահարկի գծով ծախս</i>	<u>7522.0</u>	<u>5426.6</u>

9. Հիմնական միջոցներ

	Շենքեր	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Հողամասեր	Այլ հիմնական միջոցներ	Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ	Ընդամենը
	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ	հազ. ՀՀ	հազ. ՀՀ	հազ. ՀՀ	հազ. ՀՀ
Սկզբնական արժեք							
Մնացորդը առ 01.01.24		4470.0			12052.0		16522.0
Ավելացումներ		198.0			705.0		903.0
Մնացորդը առ 31.12.24		4668.0			12757.0		17425.0
Ավելացումներ		309.0			0.0		309.0
Նվազեցում							
Մնացորդը առ 31.12.25		4977.0			12757.0		17734.0
Մաշվածություն							
Մնացորդը առ 01.01.24		3108.0			9886.0		12,994.0
Տարվա մաշվածություն		1194.0			708.0		1902.0
Ներքին շարժ							
Մնացորդը առ 31.12.24		4302.0			10594.0		14896.0
Տարվա մաշվածություն		379.0			400.0		779.0
Նվազեցում							
Մնացորդը առ 31.12.25		4681.0			10994.0		15675.0
Հաշվեկշռային արժեք							
Առ 01.01.23		1362.0			2166.0		3528.0
Առ 31.12.24		366.0			2163.0		2529.0
Առ 31.12.25		296.0			1763.0		2059.0

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

10. Ոչ կուրսական ակտիվներ

	Լիցենզիաներ, արտոնագրեր	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Սկզբնական արժեք			
Մնացորդը առ 01.01.24	2750.0	123.0	2873.0
ՈՆԱ ձեռքբերում	250.0		250.0
ՈՆԱ դուրսգրում			
Մնացորդը առ 31.12.24	3000.0	123.0	3123.0
ՈՆԱ ձեռքբերում	0.0	0.0	0.0
Մնացորդը առ 31.12.25	3000.0	123.0	3123.0
Մաշվածություն			
Մնացորդը առ 01.01.24	2700.0	123.0	2823.0
Ամորտիզացիայի ծախս	274.0		274
Ամորտիզացիայի դուրսգրում			
Մնացորդը առ 31.12.24	2974.0	123.0	3097.0
Տարվա մաշվածություն	26.0	0.0	26.0
Մնացորդը առ 31.12.25	3000.0	123.0	3123.0
Հաշվեկշռային արժեք			
Առ 01.01.24	49.0	0.0	493.0
Առ 31.12.24	26.0	0.0	26.0
Առ 31.12.25	0.0	0.0	0.0

Համառոտ տեքստ էական իրադարձությունների վերաբերյալ

11. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	Ընդամենը հազ. ՀՀ դրամ
Մնացորդը առ 01.01.24	6948.0
Ավելացում	120335.0
Մարում	106904.0
Մնացորդը առ 31.12.24	20377.0
Ավելացում	117780.0
Մարում	121801.0
Մնացորդը առ 31.12.25	16356.0

Համառոտ տեքստ էական իրադարձությունների վերաբերյալ

12. Դրամական միջոցներ

	2025թ. հազ. ՀՀ դրամ	2024թ. հազ. ՀՀ դրամ
Դրամական միջոցներ դրամարկիում	45604.0	45604.0
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում	17375.8	7001.0
Այլ հաշիվներ բանկերում	0.0	0.0
Ընդամենը դրամական միջոցներ	62979.8	52605.0

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

13. Թողարկված կապիտալ և այլ պահուստներ

Հայտարարված կանոնադրական կապիտալ

Հասարակ բաժնետոմսեր, յուրաքանչյուրը 144,525 դրամ

Ընդամենը

	2025թ.	2024թ.
հազ. ՀՀ դրամ	2890.5	2249.0
	2890.5	2249.0

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի մեծությունը հաշվարկվում է գուտ շահույթը տարվա համար բաժանելով տվյալ տարվա ընթացքում գոյություն ունեցող բաժնեմասերի քանակին:

Ընթացիկ տարվա գուտ շահույթ
 Բաժնետոմսերի քանակ (հատ)
 Միավոր բաժնեմասին ընկնող շահույթ

	2025թ.	2024թ.
հազ. ՀՀ դրամ	33193.0	30900.0
	20	20
	1659.6	1545

14. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների գծով

Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2025թ.	2024թ.
հազ. ՀՀ դրամ	13266.0	21059.5
	13266.0	21059.5

Կապակցված կողմերի բացահայտում

Ընկերությունը 2024 և 2025թթ. ընթացքում կատարել է հետևյալ գործարքները կապակցված կողմերի հետ.

	Կապակցված կողմին հաշվարկված ԱՎՈՒՄ 2025	Կապակցված կողմին հաշվարկված ԱՎՈՒՄ 2024
	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Ընկերության հիմնադիր-գործադիր մարմնի ղեկավար	1815.2	1826.3

15. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունը

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները կազմված են ֆինանսական պարտավորություններից և ֆինանսական ակտիվներից: Ընկերության հիմնական ֆինանսական պարտավորությունները ներառում են կրեդիտորական պարտքերը, բանկային վարկերը և օվերդրաֆտները: Սույն ֆինանսական գործիքների հիմնական նպատակն է հանդիսանում կառավարել կարճաժամկետ դրամական միջոցների հոսքերը և ներգրավել ֆինանսական միջոցներ Ընկերության կապիտալ ծախսումների ծրագրերի համար: Ընկերությունն ունի տարբեր

ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական ակտիվներ, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները, որոնք առաջանում են ուղղակիորեն իր գործունեություններից:

Ռիսկերի ենթարկվածությունը

Հիմնական ռիսկերը, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ Ընկերության ֆինանսական ակտիվների, պարտավորությունների կամ ապագա դրամական միջոցների հոսքերի վրա, շուկայական ռիսկերն են, որոնք ներառում են ապրանքների գնային ռիսկը, արտարժույթի ռիսկը, իրացվելիության ռիսկը և պարտքային ռիսկը:

Ապրանքների գների փոփոխության ռիսկ

Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է գործարքային արժույթների ազդեցության: Այսպիսի ենթարկվածությունն առաջանում է ֆունկցիոնալ արժույթից տարբերվող արժույթներով կատարված գնումների և վաճառքների արդյունքում:

Արտարժույթային ռիսկի ազդեցության հաշվարկի ժամանակ, Ընկերությունը հաշվի է առնում նաև բոլոր այն ակտիվների և պարտավորությունների վրա ազդեցությունը, որոնց մարումը կատարվելու է ֆունկցիոնալ արժույթից տարբերվող արժույթով:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսային ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է շուկայում տոկոսադրույքների փոփոխության հետևանքով: Շուկայական տոկոսադրույքների փոփոխության ռիսկին ենթարկվում են Ընկերության լողացող տոկոսադրույքով երկարաժամկետ պարտավորությունները:

Պարտքային ռիսկ

Ընկերությունը ունի պարտքային ռիսկ՝ կապված մատակարարներին տրամադրած կանխավճարների գծով:

Ֆինանսական գործիքներ և դրամական ավանդներ

Ընկերությունը ունի տրամադրած փոխառություններ:

Ինչ վերաբերվում է ռիսկին այլ ֆինանսական ակտիվների գծով, Ընկերությունը գնահատում է ռիսկերը նվազագույն, քանի որ փոխառությունը տրվել է միակ բաժնետիրոջը:

Կապիտալի կառավարում

Ընկերության կապիտալի կառավարման հիմնական նպատակն է Ընկերության հուսալի վարկունակության կայունության և ֆինանսական ցուցանիշների համապատասխան մակարդակի ապահովումն է՝ Ընկերության գործունեության աջակցության և բաժնետերերի շահույթը մաքսիմալացնելու նպատակով:

2025 և 2024թթ. Դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիներին կապիտալի կառավարման նպատակներում, քաղաքականություններում կամ ընթացակարգերում փոփոխություններ չեն իրականացվել:

Ընկերությունը իրականացնում է կապիտալի վերահսկողություն ֆինանսական լծակի գործակցի միջոցով, որը հաշվարկվում է որպես զուտ պարտավորությունների և ընդհանուր կապիտալի ու զուտ պարտավորությունների հանրագումարի հարաբերակցություն:

16. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից մինչև աուդիտորական ստուգումն ընկած ժամանակահատվածում տեղի չեն ունեցել այնպիսի դեպքեր կամ իրադարձություններ, որոնք կարող են էապես ազդել ֆինանսական հաշվետվությանը կամ առանձին հոդվածներին:

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՈՐ շՐՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Մի շարք նոր հաշվապահական հաշվառման ստանդարտներ և հաշվապահական հաշվառման ստանդարտների փոփոխություններ գործում են 2026թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների և փոփոխությունների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված հաշվապահական ստանդարտները:

Ստորև ներկայացված են նոր և փոփոխված ստանդարտները, որոնք թողարկված են, սակայն դեռևս չեն գործում:

- ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվություններում ներկայացում և բացահայտում» (ուժի մեջ է մտնում 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, թույլատրվում է վաղաժամ կիրառումը),
- Ֆինանսական գործիքների դասակարգում և չափումը (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ) (ուժի մեջ է մտնում 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, թույլատրվում է վաղաժամ կիրառումը միայն ֆինանսական ակտիվների դասակարգման և առնչվող բացահայտումների համար),
- ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարելավումներ – Բաժին 11 (ուժի մեջ է մտնում 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար):

Տնօրեն



Լ. Ղուկասյան

Գլխ. հաշվապահ



Ն. Հարությունյան

20.04.2026թ.

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

<<ԵՐԵՎԱՆ-ԱՌՈՂԻՏ ԿՈՆՍԱԼՏ>> ՓԲԸ

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծան.	2024թ.	2023թ.
		հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Հասույթ	4	101179.0	68,602.0
Վաճառքի ինքնարժեք	6	(69760.0)	(51,806.0)
Վարչական ծախսեր			
Համախառն շահույթ		31419.0	16,796.0
Գործառնական այլ եկամուտ		572.0	45.0
Գործառնական ծախսեր	5	(1920.0)	(7.0)
Այլ ծախսեր			
Գործառնական գործունեության արդյունքները		30071.0	16,834.0
Ֆինանսական եկամուտ	7	0.0	0.0
Ֆինանսական ծախսեր		0.0	0.0
Այլ ոչ գործառնական շահույթ /վնաս/, այդ թվում		4.0	(2.0)
Շահույթ նախքան շահութահարկը		30075.0	16,832.0
Շահութահարկի գծով ծախս	8	(5426.0)	(3058.0)
Հաշվետու տարվա գուտ շահույթ (վնաս) և համապարփակ եկամուտ		24649.0	13,774.0

Տնօրեն

Լ. Ղուկասյան

Գլխ. հաշվապահ

Ն. Հարությունյան

11.02.2025թ.



Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների քաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Թողարկված կապիտալ	Չբաշխված շահույթ	Էմիսիոն եկամուտ	Կապիտալի այլ պահուստներ	Մեփական կապիտալի այլ տարրեր	Շնորհներ
	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Մնացորդը առ 01 հունվարի 2023թ.	2249	6544				8793
Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսների գծով						0.0
Շահույթ/(վնաս) և այլ համապարփակ Շահարաժիհներ		13,772				13,772
		6,544				6544
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	2249	13,722				16,020
Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսների գծով						0.0
Շահույթ/(վնաս) և այլ համապարփակ եկամուտ տարվա համար		24499				24499
Շահարաժիհներ		7371				7371
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	2249	30900				33149

Տնօրեն

Գլխ. հաշվապահ

11.02.2025թ.

Լ. Դոնյան

Ն. Հարությունյան



Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Ծան.	2024թ.		2023թ.	
	հազ.	ՀՀ դրամ	հազ.	ՀՀ դրամ
Գործառնական գործունեություն				
Հաճախորդներից ստացված դրամական միջոցների մուտքեր		105229.8		83552.4
Այլ գործառն. գործունեությունից դրամ. միջոցների մուտքեր		71.9		45.0
Մատակարարներին վճարումներ		(11740.6)		(13260.0)
Աշխատակիցներին վճարումներ		(33679.8)		(29140.0)
Ստացված տոկոսներ				
Վճարված տոկոսներ				
Վճարված հարկեր, տուրքեր		(28099.0)		(22290.0)
Այլ գործառն. գործունեությունից դրամ. միջոցների ելքեր		(492.4)		(158.0)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		31289.9		18,749.4
Ներդրումային գործունեություն				
Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից				
Հիմնական միջոցների ձեռքբերում		(559.0)		(3048.0)
Ստացված տոկոսներ		0.0		0.0
Ներդրում բաժնետերերից		0.0		0.0
Ոչ նյութական ակտիվների գնում		0.0		0.0
Ակտիվներին վերաբերվող շտրհների ստացում		(0.0)		(0.0)
Զուտ դրամական միջոցների հոսքեր օգտագործված ներդրումային գործունեությունում		(559.0)		(3048.0)
Ֆինանսական գործունեությունից				
Փոխառություն		0.0		0.0
Մուտքեր ավանդի դիմաց ստացված տոկոսային եկամտից		0.0		0.0
Մարված փոխառություններ		(34000.0)		(47660.0)
Սեփականատերերին վճարած շահաբաժիններ		(0.0)		(0.0)
Զուտ դրամական միջոցների հոսքեր ստացված/ (օգտագործված) ֆինանսական գործունեությունից		(34000.0)		(47660.0)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/(նվազում)		3269.1		31958.6
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցներին և նրանց համարժեքներին				
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի		55007.0		87282.0
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	17	52605.0		55007.0

Տնօրեն



Լ. Դոնյան

Գլխ. հաշվապահ



Հարությունյան

11.02.2025թ.



Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համապատասխանաբար հաշվետվությունների բաղկացուցիչ մասեր նախատեսված ժամայնազրույթությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Տեղեկատվություն ընկերության մասին

<<Երևան-Աուդիտ Գոնսալտ>> ՓԲ Ընկերությունը հիմնադրվել է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոն տարածքային բաժնի կողմից <<17>> օգոստոսի 2007թ-ի: Պետական գրանցման համար՝ 286.120.06569, պետական ռեգիստրի գրանցման վկայական թիվ 03Ա 077437: Ընկերությունը համարվում է առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ., ք. Երևան, Բյուտսովի 26, գործունեության հասցեն ՀՀ., ք. Երևան, Օրբելի 45: ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության կողմից Աուդիտորական գործունեության լիցենզիա ԱՕ N 052, արված 24 սեպտեմբերի 2007թ.:

2.1 Հաշվետվության պատրաստման հիմքերը

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՓՄԿ ՖՀՄՄ) համապատասխան, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա՝ բացառությամբ հողամասերի և շենքերի:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար (1000 դրամ), եթե այլ բան նշված չէ:

2.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակելի մասերի ամփոփ նկարագիր

Ընկերությունը իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառել է հաշվապահական հաշվառման քաղաքականության հետևյալ նշանակալի մասերը.

2.2.1 Արտարժույթի փոխարկում

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է կազմակերպության ֆունկցիոնալ արժույթ:

Արտարժույթով գործարքները սկզբնապես հաշվառվում են Ընկերության կողմից ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով սահմանված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող ֆունկցիոնալ արժույթի փոխանակման սփոթ փոխարժեքով:

Բոլոր տարբերությունները ներառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են պատմական արժեքով արտարժույթով վերահաշվարկվում են՝ օգտագործելով սկզբնական գործարքի ամսաթվի դրությամբ փոխարժեքները: Արտարժույթով իրական արժեքով չափվող ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքները: Ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացող օգուտները և վնասները ճանաչվում են փոխարժեքային տարբերություններ առաջացնող հոդվածի օգուտների և վնասների հետ միասին (այն հոդվածների վերահաշվարկման տարբերությունները, որոնց օգուտը կամ վնասը ճանաչվում է այլ ֆինանսական արդյունքներում շահույթ/վնասում):

2.2.2 Հատույթի ճանաչում

Հատույթը ճանաչվում է այն չափով, որքանով հավանական է, որ ապագա տնտեսական օգուտներ կհոսեն դեպի Ընկերություն, և այդ հատույթը կարելի է արժանահավատորեն չափել՝ անկախ այն փաստից, թե երբ է վճարումը կատարվել: Հատույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով պայմանագրով սահմանված վճարման պայմանները և բացառելով հարկերն ու տուրքերը:

2.2.3 Հարկեր

Ընթացիկ շահութահարկ

Ընթացիկ շահութահարկի շահութահարկի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն գումարով, որը ակնկալվում է ստանալ հարկային մարմիններից կամ վճարել հարկային մարմիններին: Հարկերի դրույքների և հարկերի գումարների հաշվարկման համար օգտագործվել օրենքներն, այն օրենքներն են, որոնք կիրառվել կամ սահմանվել են հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ-ում:

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Իրացումից հարկեր (Ավելացված արժեքի հարկ/ԱԱՀ)

Հասույթը, ծախսերը և ակտիվները ճանաչվում են զուտ իրացման հարկերից՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

- Երբ իրացման հարկն առաջացել էր այնպիսի ակտիվների կամ ծառայությունների գնումից, որի գծով այն չի հատուցվում հարկային մարմինների կողմից, այս դեպքում հարկը ճանաչվում է որպես ակտիվի ձեռքբերման ինքնարժեքի մաս կամ որպես ծախսային հոդված համապատասխանաբար,
- Դեբիտորական և կրեդիտորական պարտքերն արտացոլելիս, որոնք ներկայացված են իրացման հարկերի գումարը ներառյալ:

Հարկային մարմիններից հատուցման ենթակա կամ պարտավորություն հանդիսացող իրացման հարկերի գծով գումարները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես դեբիտորական կամ կրեդիտորական պարտք:

Հետաձգված հարկ

- Հետաձգված հարկը հաշվառվում է պարտավորությունների մեթոդով հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների հարկային բազաների և դրանց ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվեկշռային արժեքների ժամանակավոր տարբերությունների հիման վրա: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ երբ հետաձգված հարկային պարտավորությունը առաջանում է գուղվիլի կամ ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հետ կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների դեպքում, որտեղ ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամանակահատվածը կարող է վերահսկվել և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերի և չօգտագործված հարկային վնասների համար այնքանով, որքանով հավանական է, որ կլինի հարկվող շահույթ, որի դիմաց այդ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները և տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերը և վնասները հնարավոր կլինի օգտագործել՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

- երբ նվազեցվող ժամանակավոր տարբերություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվը առաջանում է ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների գծով նվազեցվող ժամանակավոր տարբերություններից հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները կհակադարձվեն տեսանելի ապագայում և կլինի հարկվող շահույթ, որի դիմաց հնարավոր կլինի օգտագործել ժամանակավոր տարբերությունները:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում է այնքանով, որքանով այլևս հավանական չէ, որ բավարար հարկվող շահույթ կլինի, որի դիմաց կօգտագործվի հետաձգված հարկային ակտիվը: Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում այնքանով, որքանով հավանական է, որ ապագա հարկվող շահույթը թույլ կտա վերականգնել հետաձգված հարկային ակտիվը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն այն տարում, երբ ակտիվները կիրացվեն կամ պարտավորությունները

կմարվեն՝ հիմնվելով հաշվետու ամսաթվի դրությամբ կիրառված կամ կիրառման ենթակա օրենքով սահմանված հարկային դրույքաչափերի (և հարկային օրենքների) վրա:

Շահույթի կամ վնասի կազմում չճանաչված հոդվածների գծով ճանաչված հետաձգված հարկը նույնպես ճանաչվում է շահույթի կամ վնասի կազմից դուրս: Հետաձգված հարկային հոդվածները ճանաչվում են դրան վերաբերող գործարքներին գուգահեռ՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ անմիջապես սեփական կապիտալում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա իրավաբանորեն ամրագրված իրավունք ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների նկատմամբ հաշվանցելու, և հետաձգված հարկերը վերաբերում են միննույն հարկվող կազմակերպությանը և հարկային մարմիններին:

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Որպես ձեռնարկատիրական գործունեության միավորման մաս՝ ձեռքբերված հարկային օգուտները, որոնք այդ ամսաթվի դրությամբ չեն բավարարում առանձին ճանաչման չափանիշներին, ճանաչվում են հետագայում, փաստերի և իրողությունների փոփոխությունների վերաբերյալ նոր տեղեկատվության առկայության դեպքում: Ճշգրտումը դիտարկվում է որպես նվազեցում գույվիլից (քանի դեռ այն չի գերազանցում գույվիլի արժեքը), եթե այն վերաբերվում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սկզբնական հաշվառման պահին, կամ՝ արտացոլվում է շահույթում կամ վնասում:

2.2.4 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ զուտ կուտակված մաշվածությունից և/կամ արժեզրկումից կուտակված կորուստներից, եթե կան այդպիսիք: Սկզբնական արժեքն իր մեջ ներառում է հիմնական միջոցի փոխարինվող մասերի ծախսումները, երկարաժամկետ շինարարական նախագծերի փոխառության ծախսումները՝ ճանաչման չափանիշներին բավարարելու դեպքում: Երբ հիմնական միջոցի նշանակալի մասերը անհրաժեշտ է պարբերաբար փոխարինել, Ընկերությունը ապաճանաչում է փոխարինված մասը և ճանաչում նոր մասն իր օգտակար ծառայության ժամկետով և մաշվածությամբ: Նմանապես, երբ իրականացվում են լայնածավալ ստուգումներ, ապա այդ ծախսումը ճանաչվում է հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում որպես փոխարինում՝ ճանաչման չափանիշներին բավարարելու դեպքում: Բոլոր այլ վերանորոգման և սպասարկման ծախսումները առաջանալու պահին ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ակտիվի օգտագործումից հետո ակնկալվող ապագործարկման ծախսումների ներկա արժեքը ներառվում է համապատասխան ակտիվի արժեքում՝ պահուստի ճանաչման չափանիշներին բավարարելու դեպքում:

Հողամասը և շենքերը չափվում են իրական արժեքով՝ հանած վերագնահատման ամսաթվից հետո ճանաչված կուտակված մաշվածությունը շենքերի համար և արժեզրկումից կորուստները: Գնահատումներն իրականացվում են բավարար հաճախականությամբ, որպեսզի վերագնահատված ակտիվի իրական արժեքը էապես չտարբերվի իր հաշվեկշռային արժեքից:

Վերագնահատումից արժեքի ցանկացած աճ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կուտակվում սեփական կապիտալի ակտիվի վերագնահատումից պահուստում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն հակադարձում է նույն ակտիվի գծով վերագնահատումից նվազումը, որը նախկինում ճանաչվել էր ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ինչի դեպքում աճը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վերագնահատումից նվազեցումը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի և միայն այն մասով, որը հաշվանցում է ակտիվի վերագնահատման պահուստում ճանաչված նույն ակտիվի գծով վերագնահատումից աճը:

Ակտիվի վերագնահատման պահուստից տարեկան տեղափոխությունը չբաշխված շահույթ իրականացվում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերության մասով: Բացի այդ, կուտակված մաշվածությունը վերագնահատման ամսաթվի դրությամբ բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և զուտ գումարը վերաներկայացվում է ակտիվի վերագնահատված գումարի չափով: Օտարման դեպքում վաճառվող ակտիվի գծով վերագնահատման ցանկացած պահուստ տեղափոխվում է չբաշխված շահույթ:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, որը սահմանվում է հետևյալ չափով՝

- Համակարգչային տեխնիկա – 1 տարի
- Տնտեսական գույք – 8 տարի:

Սկզբնապես ճանաչված հիմնական միջոցի միավոր և ցանկացած էական մաս ապաճանաչվում է օտարման դեպքում և երբ ակտիվի օգտագործումից կամ օտարումից ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում: Ակտիվի ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտ կամ վնաս (հաշվարկված որպես օտարումից զուտ մուտքերի/հատույցների և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն) ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Ակտիվների մնացորդային արժեքները< օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության մեթոդները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում առաջընթաց:

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ակտիվների արժեզրկում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար դիտարկում է յուրաքանչյուր ակտիվը կամ դրամաստեղծ միավորը՝ պարզելու, արդյոք առկա է արժեզրկման որևէ հայտանիշ: Արժեզրկման հայտանիշների առկայության դեպքում կատարվում է փոխհատուցվող գումարի ֆորմալ հաշվարկ, որն իրենից ներկայացնում է իրական արժեքից հանած վաճառքի համար անհրաժեշտ ծախսումների և օգտագործման արժեքի առավելագույնը: Այս արժեքները պահանջում են այնպիսի գնահատումների և ենթադրությունների օգտագործում, ինչպիսիք են ապրանքների երկարաժամկետ գները (հաշվի առնելով ընթացիկ և պատմական գները, գնային տրենդները և համապատասխան գործոնները), գեսչման դրույքները, գործառնական ծախսերը, ապագա կապիտալի ծախսումների պահանջները, վախճան և վերականգնման ծախսումները, հետախուզման ներուժը և գործունեության արդյունքները: Այս գնահատումները և ենթադրությունները ենթակա են ռիսկի և անորոշության արդյունքները: Այդ իսկ պատճառով հնարավոր է, որ հանգամանքների փոփոխությունը կանդրադառնա այդ կանխատեսումների վրա, ինչը կարող է անդրադառնալ ակտիվների և/կամ դրամաստեղծ միավորների փոխհատուցվող գումարների վրա:

Իրական արժեքը սահմանվում է որպես իրագել և պատրաստակամ անկախ կողմերի միջև առևտրային գործարքի արդյունքում ակտիվի վաճառքից ստացվելիք գումար: Հանածոների իրական արժեքը սովորաբար հաշվարկվում է որպես ակտիվի շարունակական օգտագործումից ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեք՝ ներառյալ ապագա ընդլայնման ծրագրերի և վերջնական օտարման ծախսումների գնահատումները՝ օգտագործելով շուկայի անկախ մասնակիցների կողմից հաշվի առնվող ենթադրությունները: Իրական միջոցների հոսքերը գեղչվում են՝ օգտագործելով այնպիսի գեղչման դրույք, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և սովյալ ակտիվին հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

2.2.5 Վարձակալություն

Որոշելու համար, արդյոք, համաձայնությունը համարվում է կամ իր մեջ պարունակում է վարձակալություն, պետք է ուշադրություն դարձնել էությանը համաձայնության սկզբի դրությամբ: Գնահատվում է, արդյոք համաձայնության կատարումը կախված է որոշակի ակտիվի կամ ակտիվների օգտագործումից, թե համաձայնությունը փոխանցում է ակտիվը կամ ակտիվներն օգտագործելու իրավունք, նույնիսկ, եթե այդ իրավունքը բացահայտորեն նշված չէ համաձայնությունում:

Ընկերությունը որպես վարձակալ

Ֆինանսական վարձակալությունը, որը վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցում է Ընկերությանն, կապիտալացվում է վարձակալության մեկնարկի ամսաթվին վարձակալված գույքի իրական արժեքով կամ, եթե ավելի փոքր է, նվազագույն վարձակալական վճարների ներկա արժեքով: Վարձավճարները բաշխվում են ֆինանսական ծախսերի և վարձակալական պարտավորությունների նվազեցմանը այնպես, որ ստացվի հաստատուն տոկոսադրույք պարտավորությունների

մնացորդի նկատմամբ: Ֆինանսական ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսեր հոդվածում:

Վարձակալված գույքի համար հաշվարկվում է մաշվածություն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Այն դեպքում, երբ չկա ողջամիտ հավաստիացում, որ Ընկերությունը վարձակալության ժամկետի ավարտին կստանա սեփականության իրավունք, ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության ժամկետից նվազագույնով:

Գործառնական վարձակալության գծով վճարումները ճանաչվում են որպես գործառնական ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով վարձակալական ժամկետի ընթացքում:

Ընկերությունը որպես վարձատու

Գույքի վարձակալությունը, երբ ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները չեն փոխանցվում վարձակալին, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով բանակցությունների ընթացքում առաջացող սկզբնավորման ուղղակի ծախսումները գումարվում են վարձակալված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում վարձակալական ժամկետի ընթացքում այնպես, ինչպես վարձակալական եկամուտը: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես հասույթ այն ժամանակաշրջանում, որում դրանք վաստակվում են:

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

2.2.6 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, և որոնց անհրաժեշտ է ժամանակի զգալի հատված նախատեսված օգտագործմանը կամ վաճառքին պատրաստ լինելու համար, կապիտալացվում են որպես ակտիվի սկզբնական արժեքի մաս: Փոխառության մնացած բոլոր ծախսումները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, որում առաջանում են: Փոխառության ծախսումները բաղկացած են սովորական և այլ ծախսումներից, որը կազմակերպությունը կրում է կապված փոխառու միջոցների ստացման հետ:

2.2.7 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով՝ ներառյալ գործարքի ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը հաշվառվում է իրական արժեքով, որն արտացոլում է հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական պայմանները: Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխություններից օգուտները և վնասները, այդ թվում համապատասխան հարկային ազդեցությունը, ներառվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում առաջանում են: Իրական արժեքները որոշվում են հավասարակշռված արտաքին անկախ գնահատողի կողմից տարեկան կտրվածքով իրականացվող գնահատման հիման վրա՝ կիրառելով Գնահատման միջազգային ստանդարտների կոմիտեի կողմից առաջարկվող գնահատման մոդելը:

Ներդրումային գույքն ապաճանաչվում է, երբ այն օտարվում է, կամ դուրս է գալիս շահագործումից և այդ օտարումից ոչ մի ապագա տնտեսական օգուտ չի սկսել կալվում: Ակտիվի գծով օտարումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ապաճանաչման ժամանակաշրջանում:

Ներդրումային գույքից կամ ներդրումային գույքին կատարվում են վերադասակարգումներ միայն այն դեպքում, երբ դրա օգտագործման եղանակի մեջ փոփոխություն է տեղի ունեցել: Ներդրումային գույքից դեպի սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույք փոխանցման դեպքում հետագա հաշվառման համար ելակետային արժեքը օգտագործման եղանակի փոփոխության ամսաթվի դրությամբ իրական արժեքն է: Եթե սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույքը դառնում է ներդրումային, Հնկերությունը հաշվառում է նման գույքը հիմնական միջոցների հաշվառման քաղաքականության համաձայն մինչև օգտագործման եղանակի փոփոխության ամսաթիվը:

2.2.8 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, սկզբնապես չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցված կուտակված մաշվածություն կամ արժեզրկումից կուտակված կորուստներ, եթե կան այդպիսիք: Սեփական ռեսուրսների հաշվին ստեղծված ոչ նյութական ակտիվները, բացի կապիտալացված մշակման ծախսումներից, չեն կապիտալացվում և ծախսերն արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն տարում, երբ ծախսն առաջանում է:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունները գնահատվում են որպես որոշակի կամ անորոշ:

Որոշակի օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են օգտակար տնտեսական ծառայության ժամկետի ընթացքում և գնահատվում է դրանց արժեզրկումը, եթե առկա են հայտանիշներ, որ ոչ նյութական ակտիվը կարող է արժեզրկված լինել: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվի ամորտիզացիայի ժամկետը և ամորտիզացիայի մեթոդը վերանայվում են նվազագույնը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի կամ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպառման մոդելի փոփոխությունները հաշվառվում են՝ փոփոխելով համապատասխանաբար ամորտիզացիոն ժամկետը կամ մեթոդը, և դիտվում են որպես հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի ծախսը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այն ծախսերի դասում, որը համապատասխանում է ոչ նյութական ակտիվի գործառնական նշանակությանը:

Անորոշ օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն տարեկան ստուգվում է դրանց արժեզրկումը կամ առանձին կամ դրամատեսող միավորի մակարդակով: Անորոշ ժամկետի գնահատումը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ որոշելու արդյոք անորոշ ժամկետը շարունակվում է ողջամիտ մնալ: Եթե ոչ, ապա օգտակար ծառայության ժամկետը փոփոխվում և դառնում է որոշակի առաջընթաց կիրառմամբ:

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ոչ նյութական ակտիվի ապահանջումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից զուտ ներհոսքի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ակտիվն ապահանջվում է:

2.2.9 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Ֆորաքանչյուր արտադրանքի ներկա գտնվելու վայր և վիճակին հասցնելու հետ կապված ծախսումները հաշվառվում են հետևյալ կերպ.

Հումք՝

- գնման արժեքը առաջին մուտք առաջին ելք սկզբունքով,

Պատրաստի և անավարտ արտադրանք

ուղղակի հումքի, աշխատանքային ծախսումների և արտադրական վերադիրների համամասնությունը՝ ելնելով արտադրական հզորությունների նորմալ մակարդակից, բացառությամբ՝ փոխառության ծախսումների:

Պաշարների սկզբնական արժեքը ներառում է համապատասխան հումքի ձեռքբերման գծով դրամական միջոցների հոսքերի հեջավորման օգուտների և վնասների տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքներից:

Իրացման զուտ արժեքը կազմակերպության սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:

2.2.10 Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Հնկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտավորություն որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և այդ պարտավորությունը կարելի է արժանահավատորեն չափել: Երբ Հնկերությունն ակնկալում է, որ պահուստն ամբողջությամբ կամ դրա մի մասը կփոխհատուցվի, օրինակ՝ ապահովագրական պայմանագրի շրջանակներում, փոխհատուցման գումարը ճանաչվում է որպես առանձին ակտիվ, բայց միայն այն դեպքում, երբ փոխհատուցումը ըստ էության որոշակի է: Պահուստին վերաբերող ծախսերը ներկայացվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ զուտ ցանկացած փոխհատուցումից:

2.2.11 Ֆինանսական գործիքներ

ՀՀՄՍ 39-ի գործողության ոլորտում ընկած ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ կամ, համապատասխանության դեպքում, արդյունավետ հեջում որպես հեջավորման գործիքներ նախատեսված ածանցյալ գործիքներ: Հնկերությունը որոշում է ֆինանսական ակտիվի դասակարգումը սկզբնական ճանաչման ժամանակ:

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով գումարած՝ գործարքի ծախսումները, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից:

Այն ֆինանսական ակտիվների գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվների մատակարարում շուկայում գործող կարգավորման կամ գործարար սովորություն սահմանված ժամանակահատվածում (կանոնավոր կերպով առավաճառք) ճանաչվում է առևտրի ամսաթվին, այսինքն՝ այն օրը, երբ Հնկերությունը պարտավորվում է գնել կամ վաճառել ակտիվը:

Հետագա չափումը

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը կախված է ֆինանսական ակտիվի դասից ըստ ստորև ներկայացվածի.

Ֆինանսական ակտիվներ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ և ֆինանսական ակտիվներ, որոնք սկզբնապես նախատեսվել են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ժամանակում վաճառելու կամ հետ գնվելու նպատակով: Ածանցյալ գործիքները, ներառյալ առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները, ևս

ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ժամոթագրությունների հետ մեկտեղ:

դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք նախատեսված չեն որպես արդյունավետ հեջավորման գործիքներ, ինչպես նկարագրված է ՀՀՄՍ 39-ում:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ հաշվառվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքի գուտ փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական ծախս (իրական արժեքի գուտ բացասական փոփոխություններ) կամ ֆինանսական եկամուտ (իրական արժեքի գուտ դրական փոփոխություններ):

Սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող նախատեսված ֆինանսական ակտիվները նախատեսվում են սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ միայն այն դեպքում, երբ ՀՀՄՍ 39-ի սահմանած չափանիշները բավարարված են: Ընկերությունը չի նախատեսել որևէ ֆինանսական ակտիվ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ընկերությունը դիտարկում է առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները, բացառությամբ ածանցյալ գործիքների, որոշելու արդյոք մոտ ապագայում վաճառելու նպատակը դեռ տեղի է: Երբ հազվադեպ դեպքերում Ընկերությունը հնարավորություն չի ունենում վաճառել այդ ֆինանսական ակտիվները ակտիվ շուկայի բացակայության պատճառով, և տեսանելի ապագայում դրանք վաճառելու ղեկավարության մտադրությունը էապես փոխվում է, Ընկերությունը կարող է վերադասակարգել այդ ֆինանսական ակտիվները: Վերադասակարգումը փոխառությունների կամ դեբիտորական պարտքերի, վաճառքի համար մատչելի կամ

մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների կախված է ակտիվի բնույթից: Այս դիտարկումը չի ազդում այն ֆինանսական ակտիվների վրա, որոնք սկզբնապես նախատեսվել են որպես ֆինանսական ակտիվ՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող օգտագործելով նախատեսման պահին այդ դասակարգման հնարավորությունը, քանի որ տվյալ գործիքները չեն կարող վերադասակարգվել սկզբնական ճանաչումից հետո:

Հիմնական պայմանագրերում ներառված պարունակվող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և գրանցվում են իրական արժեքով, եթե դրանց տնտեսական բնույթագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն հիմնական պայմանագրերի բնույթագրերին և ռիսկերին և հիմնական պայմանագրերը չեն պահվում առևտրային նպատակով կամ չեն նախատեսվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող գործիքներ: Այս պարունակվող ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Գնահատման վերանայումը տեղի է ունենում միայն, եթե առկա է փոփոխություն պայմանագրի պայմաններում, որն էապես փոխում է դրամական հոսքերը:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են ֆիքսված կամ որոշակի վճարումներով, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում: Սկզբնական չափումից հետո այդպիսի ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանելով արժեզրկումը: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած զեղչ կամ հավելավճար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի մաս: Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված ամորտիզացիան ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական եկամուտներում: Արժեզրկումից առաջացած կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ փոխառությունների գծով՝ ֆինանսական ծախսերում, իսկ դեբիտորական պարտքերի գծով՝ վաճառքի ինքնարժեքում կամ այլ գործառնական ծախսերում:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Ֆիքսված կամ որոշակի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Ընկերությունն ունի մտադրություն և հնարավորություն դրանք պահելու մինչև մարմանը: Սկզբնական չափումից հետո մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցնելով արժեզրկումը: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ցանկացած զեղչ կամ հավելավճար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս: Արդյունավետ տոկոսադրույքի ամորտիզացիան ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական եկամուտ: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական ծախս: Ընկերությունը չի ունեցել մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ 2023 և 2024թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող հաշվետու ժամանակաշրջաններին:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումներ

Իրական արժեքը սահմանվում է որպես իրազեկ և պատրաստակամ անկախ կողմերի միջև առևտրային գործարքի արդյունքում ակտիվի վաճառքից ստացվելիք գումար: Հանածոների իրական արժեքը սովորաբար հաշվարկվում է որպես ակտիվի շարունակական օգտագործումից ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեք՝ ներառյալ ապագա ընդլայնման ծրագրերի և վերջնական օտարման ծախսումների գնահատումները՝ օգտագործելով շուկայի անկախ մասնակիցների կողմից հաշվի առնվող ենթադրությունները: Իրական միջոցների հոսքերը գեղչվում են՝ օգտագործելով այնպիսի գեղչման դրույք, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և տվյալ ակտիվի հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

2.2.5 Վարձակալություն

Որոշելու համար, արդյոք, համաձայնությունը համարվում է կամ իր մեջ պարունակում է վարձակալություն, պետք է ուշադրություն դարձնել էությանը համաձայնության սկզբի դրությամբ: Գնահատվում է, արդյոք համաձայնության կատարումը կախված է որոշակի ակտիվի կամ ակտիվների օգտագործումից, թե համաձայնությունը փոխանցում է ակտիվը կամ ակտիվներն օգտագործելու իրավունք, նույնիսկ, եթե այդ իրավունքը բացահայտորեն նշված չէ համաձայնությունում:

Ընկերությունը որպես վարձակալ

Ֆինանսական վարձակալությունը, որը վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցում է Ընկերությանն, կապիտալացվում է վարձակալության մեկնարկի ամսաթվին վարձակալված գույքի իրական արժեքով կամ, եթե ավելի վաղ է, նվազագույն վարձակալական վճարների ներկա արժեքով: Վարձավճարները բաշխվում են ֆինանսական ծախսերի և վարձակալական պարտավորությունների նվազեցմանը այնպես, որ ստացվի հաստատուն տոկոսադրույք պարտավորությունների

մնացորդի նկատմամբ: Ֆինանսական ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսեր հոդվածում:

Վարձակալված գույքի համար հաշվարկվում է մաշվածություն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Այն դեպքում, երբ չկա ողջամիտ հավաստիացում, որ Ընկերությունը վարձակալության ժամկետի ավարտին կստանա սեփականության իրավունք, ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության ժամկետից նվազագույնով:

Գործառնական վարձակալության գծով վճարումները ճանաչվում են որպես գործառնական ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով վարձակալական ժամկետի ընթացքում:

Ընկերությունը որպես վարձատու

Գույքի վարձակալությունը, երբ ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները չեն փոխանցվում վարձակալին, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով բանակցությունների ընթացքում առաջացող սկզբնավորման ուղղակի ծախսումները գումարվում են վարձակալված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում վարձակալական ժամկետի ընթացքում այնպես, ինչպես վարձակալական եկամուտը: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես հասույթ այն ժամանակաշրջանում, որում դրանք վաստակվում են:

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

2.2.6 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, և որոնց անհրաժեշտ է ժամանակի զգալի հատված նախատեսված օգտագործմանը կամ վաճառքին պատրաստ լինելու համար, կապիտալացվում են որպես ակտիվի սկզբնական արժեքի մաս: Փոխառության մնացած բոլոր ծախսումները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, որում առաջանում են: Փոխառության ծախսումները բաղկացած են տոկոսից և այլ ծախսումներից, որը կազմակերպությունը կրում է կապված փոխառու միջոցների ստացման հետ:

2.2.7 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով՝ ներառյալ գործարքի ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը հաշվառվում է իրական արժեքով, որն արտացոլում է հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական պայմանները: Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխությունից օգուտները և վնասները, այդ թվում համապատասխան հարկային ազդեցությունը, ներառվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում առաջանում են: Իրական արժեքները որոշվում են հավասարակշռված արտաքին անկախ գնահատողի կողմից տարեկան կտրվածքով իրականացվող գնահատման հիման վրա՝ կիրառելով Գնահատման միջազգային ստանդարտների կոմիտեի կողմից առաջարկվող գնահատման մոդելը:

Ներդրումային գույքն ապաճանաչվում է, երբ այն օտարվում է, կամ դուրս է գալիս շահագործումից և այդ օտարումից ոչ մի ապագա տնտեսական օգուտ չի ակնկալվում: Ակտիվի գծով օտարումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ապաճանաչման ժամանակաշրջանում:

Ներդրումային գույքից կամ ներդրումային գույքին կատարվում են վերադասակարգումներ միայն այն դեպքում, երբ դրա օգտագործման եղանակի մեջ փոփոխություն է տեղի ունեցել: Ներդրումային գույքից դեպի սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույք փոխանցման դեպքում հետագա հաշվառման համար ելակետային արժեքը օգտագործման եղանակի փոփոխության ամսաթվի դրությամբ իրական արժեքն է: Եթե սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույքը դառնում է ներդրումային, Հնկերությունը հաշվառում է նման գույքը հիմնական միջոցների հաշվառման քաղաքականության համաձայն մինչև օգտագործման եղանակի փոփոխության ամսաթիվը:

2.2.8 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, սկզբնապես չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցված կուտակված մաշվածություն կամ արժեզրկումից կուտակված կորուստներ, եթե կան այդպիսիք: Սեփական ռեսուրսների հաշվին ստեղծված ոչ նյութական ակտիվները, բացի կապիտալացված մշակման ծախսումներից, չեն կապիտալացվում և ծախսերն արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն տարում, երբ ծախսն առաջանում է:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունները գնահատվում են որպես որոշակի կամ անորոշ:

Որոշակի օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են օգտակար տնտեսական ծառայության ժամկետի ընթացքում և գնահատվում է դրանց արժեզրկումը, եթե առկա են հայտանիշներ, որ ոչ նյութական ակտիվը կարող է արժեզրկված լինել: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվի ամորտիզացիայի ժամկետը և ամորտիզացիայի մեթոդը վերանայվում են նվազագույնը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի կամ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպառման մոդելի փոփոխությունները հաշվառվում են՝ փոփոխելով համապատասխանաբար ամորտիզացիոն ժամկետը կամ մեթոդը, և դիտվում են որպես հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի ծախսը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այն ծախսերի դասում, որը համապատասխանում է ոչ նյութական ակտիվի գործառնական նշանակությանը:

Անորոշ օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն տարեկան ստուգվում է դրանց արժեզրկումը կամ առանձին կամ դրամաստեղծ միավորի մակարդակով: Անորոշ ժամկետի գնահատումը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ որոշելու արդյոք անորոշ ժամկետը շարունակվում է ողջամիտ մնալ: Եթե ոչ, ապա օգտակար ծառայության ժամկետը փոփոխվում և դառնում է որոշակի առաջընթաց կիրառմամբ:

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից գուտ ներհոսքի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

2.2.9 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Ֆուրաբանչյուր արտադրանքի ներկա գտնվելու վայր և վիճակին հասցնելու հետ կապված ծախսումները հաշվառվում են հետևյալ կերպ.

Հումք՝

- գնման արժեքը առաջին մուտք առաջին ելք սկզբունքով,

Պատրաստի և անավարտ արտադրանք

ուղղակի հումքի, աշխատանքային ծախսումների և արտադրական վերադիրների համամասնությունը՝ ելնելով արտադրական հզորությունների նորմալ մակարդակից, բացառությամբ՝ փոխառության ծախսումների:

Պաշարների սկզբնական արժեքը ներառում է համապատասխան հումքի ձեռքբերման գծով դրամական միջոցների հոսքերի հեջավորման օգուտների և վնասների տեղափոխումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքներից:

Իրացման գուտ արժեքը կազմակերպության սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:

2.2.10 Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Հնկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտավորություն որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և այդ պարտավորությունը կարելի է արժանահավատորեն չափել: Երբ Հնկերությունն ակնկալում է, որ պահուստն ամբողջությամբ կամ դրա մի մասը կփոխհատուցվի, օրինակ՝ ապահովագրական պայմանագրի շրջանակներում, փոխհատուցման գումարը ճանաչվում է որպես առանձին ակտիվ, բայց միայն այն դեպքում, երբ փոխհատուցումը ըստ էության որոշակի է: Պահուստին վերաբերող ծախսերը ներկայացվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ գուտ ցանկացած փոխհատուցումից:

2.2.11 Ֆինանսական գործիքներ

ՀՀՄՍ 39-ի գործողության ոլորտում ընկած ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ կամ, համապատասխանության դեպքում, արդյունավետ հեջում որպես հեջավորման գործիքներ նախատեսված անանցյալ գործիքներ: Հնկերությունը որոշում է ֆինանսական ակտիվի դասակարգումը սկզբնական ճանաչման ժամանակ:

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով գումարած՝ գործարքի ծախսումները, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից:

Այն ֆինանսական ակտիվների գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվների մատակարարում շուկայում գործող կարգավորմամբ կամ գործարար սովորություն սահմանված ժամանակահատվածում (կանտանվոր կերպով առուվաճառք) ճանաչվում է առևտրի ամսաթվին, այսինքն՝ այն օրը, երբ Հնկերությունը պարտավորվում է գնել կամ վաճառել ակտիվը:

Հետագա չափումը

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը կախված է ֆինանսական ակտիվի դասից ըստ ստորև ներկայացվածի.

Ֆինանսական ակտիվներ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ և ֆինանսական ակտիվներ, որոնք սկզբնապես նախատեսվել են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ժամանակում վաճառելու կամ հետ գնվելու նպատակով: Ածանցյալ գործիքները, ներառյալ առանձնացված պարունակվող անանցյալ գործիքները, ևս

ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք նախատեսված չեն որպես արդյունավետ հեջավորման գործիքներ, ինչպես նկարագրված է ՀՀՄՍ 39-ում:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ հաշվառվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքի գուտ փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական ծախս (իրական արժեքի գուտ բացասական փոփոխություններ) կամ ֆինանսական եկամուտ (իրական արժեքի գուտ դրական փոփոխություններ):

Սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող նախատեսված ֆինանսական ակտիվները նախատեսվում են սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ միայն այն դեպքում, երբ ՀՀՄՍ 39-ի սահմանած չափանիշները բավարարված են: Ընկերությունը չի նախատեսել որևէ ֆինանսական ակտիվ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ընկերությունը դիտարկում է առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները, բացառությամբ ածանցյալ գործիքների, որոշելու արդյո՞ք մոտ ապագայում վաճառելու նպատակը դեռ տեղին է: Երբ հազվադեպ դեպքերում Ընկերությունը հնարավորություն չի ունենում վաճառել այդ ֆինանսական ակտիվները ակտիվ շուկայի բացակայության պատճառով, և տեսանելի ապագայում դրանք վաճառելու ղեկավարության մտադրությունը էական փոխվում է, Ընկերությունը կարող է վերադասակարգել այդ ֆինանսական ակտիվները: Վերադասակարգումը փոխառությունների կամ դեբիտորական պարտքերի, վաճառքի համար մատչելի կամ

մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների կախված է ակտիվի բնույթից: Այս դիտարկումը չի ազդում այն ֆինանսական ակտիվների վրա, որոնք սկզբնապես նախատեսվել են որպես ֆինանսական ակտիվ՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող օգտագործելով նախատեսման պահին այդ դասակարգման հնարավորությունը, քանի որ տվյալ գործիքները չեն կարող վերադասակարգվել սկզբնական ճանաչումից հետո:

Հիմնական պայմանագրերում ներառված պարունակվող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և գրանցվում են իրական արժեքով, եթե դրանց տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն հիմնական պայմանագրերի բնութագրերին և ռիսկերին և հիմնական պայմանագրերը չեն պահվում առևտրային նպատակով կամ չեն նախատեսվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող գործիքներ: Այս պարունակվող ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Գնահատման վերանայումը տեղի է ունենում միայն, եթե առկա է փոփոխություն պայմանագրի պայմաններում, որն էական փոխում է դրամական հոսքերը:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են ֆիքսված կամ որոշակի վճարումներով, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում: Սկզբնական չափումից հետո այդպիսի ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանելով արժեզրկումը: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած զեղչ կամ հավելավճար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի մաս: Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված ամորտիզացիան ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական եկամուտներում: Արժեզրկումից առաջացած կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ փոխառությունների գծով՝ ֆինանսական ծախսերում, իսկ դեբիտորական պարտքերի գծով՝ վաճառքի ինքնարժեքում կամ այլ գործառնական ծախսերում:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Ֆիքսված կամ որոշակի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Ընկերությունն ունի մտադրություն և հնարավորություն դրանք պահելու մինչև մարումը: Սկզբնական չափումից հետո մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցնելով արժեզրկումը: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ցանկացած զեղչ կամ հավելավճար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս: Արդյունավետ տոկոսադրույքի ամորտիզացիան ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական եկամուտ: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական ծախս: Ընկերությունը չի ունեցել մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ 2019 և 2018թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող հաշվետու ժամանակաշրջաններին:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումները ներառում են բաժնային և պարտքային գործիքներ: Վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնային ներդրումները այն ներդրումներն են, որոնք չեն դասակարգվել որպես առևտրային նպատակով պահվող կամ նախատեսվել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Այս դասի պարտքային գործիքները այն գործիքներն են, որոնց

ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների թաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

կազմակերպությունը նախատեսում է պահել անորոշ ժամկետով և որոնք կարող են վաճառվել ելնելով իրացվելիության անհրաժեշտությունից կամ շուկայական պայմանների փոփոխությունից:

Սկզբնական ճանաչումից հետո վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումները հետագայում չափվում են իրական արժեքով, չիրացված օգուտները և վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով պահուստում այնքան ժամանակ, մինչև ներդրումը ապաճանաչվի, որի դեպքում կուտակված օգուտը կամ վնասը ճանաչվում է այլ գործառնական եկամուտներում, կամ ներդրումը որոշվի որպես արժեզրկված, որի դեպքում կուտակված վնասը վերադասակարգվում է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով պահուստից ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսերին: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումները պահելու ընթացքում առաջացած տոկոսները հաշվառվում են որպես տոկոսային եկամուտ՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ընկերությունը գնահատում է, արդյոք, մոտ ապագայում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները վաճառելու հնարավորությունը և մտադրությունը դեռևս տեղին է: Հազվադեպ դեպքերում, երբ

Ընկերությունը չի կարողանում վաճառել այդպիսի ֆինանսական ակտիվները ակտիվ շուկայի բացակայության պատճառով և տեսանելի ապագայում դրանք վաճառելու ղեկավարության մտադրությունը էապես փոխվում է, Ընկերությունը կարող է վերադասակարգել այդ ֆինանսական ակտիվները: Փոխառություններ և դեբիտորական պարտքեր վերադասակարգումը թույլատրվում է, երբ ֆինանսական ակտիվները համապատասխանում են փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը և Ընկերությունն ունի մտադրություն և հնարավորություն պահելու այդ ակտիվները տեսանելի ապագայում կամ մինչև մարում: Մինչև մարման ժամկետը պահվող վերադասակարգումը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ Ընկերությունն ունի հնարավորություն և մտադրություն այդ ակտիվները համապատասխանաբար պահելու:

Վաճառքի համար մատչելի դասից վերադասակարգված ֆինանսական ակտիվների համար վերադասակարգման ամսաթվի դրությամբ իրական արժեքով որոշված հաշվեկշռային արժեքը դառնում է իր նոր ամորտիզացված արժեքը և ցանկացած նախկին օգուտ կամ վնաս, որը ճանաչվել էր սեփական կապիտալում, ամորտիզացվում է շահույթում կամ վնասում ներդրման մնացած ժամկետի ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքը: Նոր ամորտիզացված արժեքի և մարման գումարի միջև ցանկացած տարբերություն ևս ամորտիզացվում է ակտիվի մնացած ժամկետի ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքը: Եթե ակտիվը հետագայում որոշվում է որպես արժեզրկված, ապա սեփական կապիտալում հաշվառված գումարը վերադասակարգվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ, եթե կիրառելի է ֆինանսական ակտիվի մասը կամ ֆինանսական ակտիվների Ընկերության մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքի ժամկետն ավարտված է,
- Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ փոխանցման համաձայնագրի համաձայն պարտավորվում է վճարել ստացված բոլոր դրամական հոսքերը առանց էական ուշացման երբեք կողմին տարանցիկ համաձայնությամբ, և, կամ (ա) Ընկերությունը փոխանցել է ակտիվի գծով ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները, կամ (բ) Ընկերությունը ոչ փոխանցել է և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների Ընկերության՝ արժեզրկված լինելու անկողմնակալ վկայության գնահատում: Ֆինանսական ակտիվը կամ ակտիվների Ընկերությունը համարվում են արժեզրկված այն և միայն այն դեպքում, եթե կա արժեզրկման անկողմնակալ վկայության, որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («կորուստներ վկայող իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվից կամ ակտիվների Ընկերությանց ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել: Արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել վարկառուի կամ վարկառուների Ընկերության զգալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման ուշացումը կամ չվճարումը, այն հավանականությունը, որ տեղի կունենա սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմավորում, ինչպես նաև դիտարկվող տեղեկատվությունն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափերի նվազման վերաբերյալ, օրինակ՝ տնտեսական պայմանների փոփոխություն, որոնք կարող են հանգեցնել ձախողումների:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սկզբնական ճանաչումը և չափումը

ՀՀՄՍ 39-ի գործողության ոլորտում գտնվող ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություններ չափվող իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, վարկեր և փոխառություններ, կամ համապատասխանության դեպքում ածանցյալ գործիքներ նախատեսված որպես հեջավորման գործիք արդյունավետ հեջում: Ընկերությունը դասակարգում է ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման ժամանակ:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի ու փոխառությունների պարագայում՝ ուղղակի վերագրելի գործարքի ծախսումներից գումար:

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, բանկային օվերդրաֆտները, վարկերը և փոխառությունները, ֆինանսական երաշխավորության պայմանագրերը և ածանցյալ ֆինանսական գործիքները:

Հետագա չափումը

Ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը կախված է դասակարգումից ըստ ստորև ներկայացվածի.

Ֆինանսական պարտավորություններ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական պարտավորությունները և այն ֆինանսական պարտավորությունները, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսվել են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ապագայում վաճառելու նպատակով: Այս դասը ներառում է այն ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք նախատեսված չեն որպես հեջավորման գործիքներ հեջավորման հարաբերություններում՝ ինչպես դա սահմանված է ՀՀՄՍ 39 ստանդարտով: Առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները նույնպես դասակարգված են որպես վաճառքի համար պահվող, եթե դրանք չեն նախատեսվել որպես արդյունավետ հեջավորման գործիքներ:

Առևտրային նպատակով պահվող պարտավորությունների գծով օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Սկզբնական ճանաչման ժամանակ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող նախատեսված ֆինանսական պարտավորությունները նախատեսվում են սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ՝ միայն ՀՀՄՍ 39 ստանդարտի չափանիշները բավարարելու դեպքում: Ընկերությունը չի նախատեսել որևէ ֆինանսական պարտավորություն որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Վարկեր և փոխառություններ

Սկզբնական ճանաչումից հետո սոկոսային վարկերն ու փոխառությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ սոկոսադրույքի մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ պարտավորություններն ապաճանաչվում են, ինչպես նաև արդյունավետ սոկոսադրույքով ամորտիզացնելիս:

Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած զեղչ կամ հավելավճար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ, որոնք հանդիսանում են արդյունավետ սոկոսադրույքի բաղկացուցիչ մաս: Արդյունավետ սոկոսադրույքով հաշվարկված ամորտիզացիան ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսեր հոդվածում:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Ընկերության կողմից թողարկված ֆինանսական երաշխավորության պայմանագրերը այն պայմանագրերն են, ըստ որոնց պահանջվում է կատարել վճարում փոխհատուցելու պարտատիրոջ վնասները, որոնք առաջացել են այն պատճառով, որ տվյալ պարտատերը չի կատարել վճարում պարտքային գործիքի պայմանների համաձայն: Ֆինանսական երաշխավորության պայմանագիրը սկզբնապես ճանաչվում է որպես պարտավորություն իրական արժեքով՝ ճշգրտված երաշխավորության թողարկմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի ծախսումներով: Հետագայում պարտավորությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից առավելագույնով՝ հաշվետու ամսաթվի դրությամբ ներկա պարտավորությունը մարելու համար անհրաժեշտ ծախսի լավագույն գնահատական և սկզբնապես ճանաչված գումար՝ նվազեցված կուտակված ամորտիզացիան:

Ապաճանաչում

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը:

Նույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորության փոխարինումը այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել է

ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

գործող պարտավորության պայմանների էական փոփոխություն, սպա պետք է հին պարտավորությունը ապաճանաչել և նոր պարտավորությունը ճանաչել: Համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

2.3 Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում

3 Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ՖՀՄՄ-երին համապատասխան դեկլարությունից պահանջում է կիրառել դատողությունների, ենթադրություններ և գնահատումներ, որոնք ազդում են հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական հաշվետվություններում ակտիվների, պարտավորությունների գումարների և պայմանական պարտավորությունների բացահայտման վրա, և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հասույթների և ծախսերի մեծության վրա: Գնահատումներին ու ենթադրություններին անընդհատ դիտարկվում են և հիմնված են դեկլարության փորձի և այլ գործոնների վրա ներառյալ այն սպասումները, որոնք կիրառվել են դրոշակի պայմանների դեպքում: Այնուամենայնիվ, իրական արդյունքները կարող են տարբերվել այս գնահատումներից, եթե տարբեր ենթադրություններ կիրառվեն կամ տարբեր պայմաններ գոյություն ունենան:

4. Հասույթ

	2023թ. հազ. ՀՀ դրամ	2022թ. հազ. ՀՀ դրամ
Ծառայությունների մատուցումից հասույթ 20% ԱԱՀ	62802.0	51358.0
Ծառայությունների մատուցումից հասույթ 0 % ԱԱՀ	0.0	0.0
Ծառայությունների մատուցումից հասույթ ազատված ԱԱՀ	5800.0	4250.0
Ընդամենը	68602.0	55608.0

5. Գործառնական ծախսեր

	2023թ. հազ. ՀՀ դրամ	2022թ. հազ. ՀՀ դրամ
Ծախսեր տույժերից և տուգանքներից	1.0	1.0
Գործառնական այլ ծախսեր	0.0	0.0
Անհուսալի դեբիտորական պարտքեր	0.0	0.0
Ընդամենը գործառնական ծախսեր	1.0	1.0

Վարչական ծախսեր

	2023թ. հազ. ՀՀ դրամ	2022թ. հազ. ՀՀ դրամ
Աշխատավարձ	35773.0	30167.0
Կոմունալ ծառայություններ և գրասենյակային ծախսեր	1910.0	1800.0
Մարկետինգի և գովազդի ծախսեր	367.0	367.0
Կադրերի պատրաստման ծախսեր	0.0	0.0
Փոստի և կապի ծառայությունների գծով ծախսեր	434.0	428.0
Գործուղման և ներկայացուցչական	0.0	0.0
Բանկային ծառայությունների վճարներ	28.0	29.0
Մաշվածություն և ամորտիզացիա	2461.0	1585.0
Հարկերի գծով ծախսեր	229.0	1449.0
Աուդիտորական և խորհրդատվական	0.0	0.0
Վարձակալական ծախսեր	4,539.0	6931.0
Այլ ծախսեր	5911.0	5184.0
Ընդամենը վարչական ծախսեր	51654.0	47940.0

7. Ֆինանսական եկամուտ

	2023թ. հազ. ՀՀ դրամ	2022թ. հազ. ՀՀ դրամ
Երկարաժամկետ ավանդներից տոկոսային եկամուտ	0.0	0.0
Ընդամենը ֆինանսական եկամուտներ	0.0	0.0

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

8. Շահութահարկ

2023 և 2022թթ. Դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների շահութահարկի գծով ծախսի տարրերն են.

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

	2023թ. հազ. ՀՀ դրամ	2022թ. հազ. ՀՀ դրամ
<i>Ընթացիկ շահութահարկ՝</i>		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	3058.0	1449.0
Նախորդ տարվա ընթացիկ շահութահարկի գծով ճշգրտումներ		
<i>Հետաձգված հարկ՝</i>		
Ժամանակավոր տարբերությունների առաջացմանը կամ հակադարձմանը վերաբերող		
<i>Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված շահութահարկի գծով ծախս</i>	3058.0	1449.0

9. Հիմնական միջոցներ

	Շենքեր	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Հողամասեր	Այլ հիմնական միջոցներ	Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ	Ընդամենը
						հազ. ՀՀ	
Սկզբնական արժեք							
Մնացորդը առ 01.01.22		1066.0			10585.0		11651.0
Ավելացումներ		601.0			932.0		1533.0
Մնացորդը առ 31.12.22		1667.0			11517.0		13184.0
Ավելացումներ		2803.0			535.0		3338.0
Նվազեցում							
Մնացորդը առ 31.12.23		4470.0			12052.0		16522.0
Մաշվածություն							
Մնացորդը առ 01.01.22		1496.0			9320.0		10816.0
Տարվա մաշվածություն		0.0			41.0		41.0
Ներքին շարժ							
Մնացորդը առ 31.12.22		1496.0			9361.0		10775.0
Տարվա մաշվածություն		1612.0			525.0		2137.0
Նվազեցում							
Մնացորդը առ 31.12.23		3108.0			9886.0		12,994.0
Հաշվեկշռային արժեք							
Առ 01.01.22		0.0			835.0		835.0
Առ 31.12.22		601.0			1808.0		2409.0
Առ 31.12.23		1362.0			2166.0		3528.0

Համառոտ տեքստ էական իրադարձությունների վերաբերյալ

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ոչ նյութական ակտիվներ

	Լիցենզիաներ, արտոնագրեր	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Սկզբնական արժեք			
Մնացորդը առ 01.01.22	2250.0	123.0	2373.0
ՈՆԱ ձեռքբերում	250.0		250.0
ՈՆԱ դուրսգրում			
Մնացորդը առ 31.12.22	2500.0	123.0	2623.0
ՈՆԱ ձեռքբերում	250.0		250.0
Մնացորդը առ 31.12.23	2750.0	123.0	2873.0
Մաշվածություն			
Մնացորդը առ 01.01.22	1,941.0	118.0	2059.0
Ամորտիզացիայի ծախս	517.0	5.0	522.0
Ամորտիզացիայի դուրսգրում			
Մնացորդը առ 31.12.22	2,458.0	123.0	2581.0
Տարվա մաշվածություն	242.0		242
Մնացորդը առ 31.12.23	2700.0	123.0	2823.0
Հաշվեկշռային արժեք			
Առ 01.01.22	309.0	4.0	313.0
Առ 31.12.22	43.0	0.0	43.0
Առ 31.12.23	49.0	0.0	49.0

Համառոտ տեքստ էական իրադարձությունների վերաբերյալ

10. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	Ընդամենը հազ. ՀՀ դրամ
Մնացորդը առ 01.01.22	5186.0
Ավելացում	66699.0
Մարում	63753.0
Անհուսալի պարտքի պահուստի շարժ	
Մնացորդը առ 31.12.22	8133.0
Ավելացում	81163.0
Մարում	82348.0
Մնացորդը առ 31.12.23	6948.0

Համառոտ տեքստ էական իրադարձությունների վերաբերյալ

11. Դրամական միջոցներ

	2023թ. հազ. ՀՀ դրամ	2022թ. հազ. ՀՀ դրամ
Դրամական միջոցներ դրամարկղում	51438.0.0	82483.0
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում	3569.0	5093.5
Այլ հաշիվներ բանկներում	0.0	0.0
Ընդամենը դրամական միջոցներ	55007.0	87577.0

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

12. Թողարկված կապիտալ և այլ պահուստներ

Հայտարարված կանոնադրական կապիտալ

Հասարակ բաժնետոմսեր, յուրաքանչյուրը 112,425 դրամ
Արտոնյալ բաժնետոմսեր, յուրաքանչյուրը XX դրամ
Ընդամենը

	2023թ.	2022թ.
հազ. ՀՀ դրամ	2249.0	2249.0
	2249.0	2249.0

Համառոտ տեքստ էական իրադարձությունների վերաբերյալ

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի մեծությունը հաշվարկվում է գուտ շահույթը տարվա համար բաժանելով տվյալ տարվա ընթացքում գոյություն ունեցող բաժնեմասերի քանակին:

	2023թ.	2022թ.
Ընթացիկ տարվա գուտ շահույթ	13722.0.0	6544.0
Բաժնետոմսերի քանակ (հատ)	20	20
Միավոր բաժնեմասին ընկնող շահույթ	686.1	327.2

Այլ պահուստներ

Ավելացնել տեքստ այստեղ պահուստների վերաբերյալ

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2023թ.	2022թ.
Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների գծով	4874.0	4874.0
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3569.0	4874.0

Համառոտ տեքստ էական իրադարձությունների վերաբերյալ

Կապակցված կողմերի բացահայտում

Ընկերությունը 2022 և 2023թթ. ընթացքում կատարել է հետևյալ գործարքները կապակցված կողմերի հետ.

	Կապակցված	Կապակցված
	կողմին	կողմին
	հաշվարկված	հաշվարկված
	ԱՎՈՒՄ 2023	ԱՎՈՒՄ 2022
	հազ. ՀՀ դրամ	հազ. ՀՀ դրամ
Ընկերության հիմնադիր-գործադիր մարմնի ղեկավար		
Լևոն Ղուկասյան	1569.0	1626.8

13. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունը

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները կազմված են ֆինանսական պարտավորություններից և ֆինանսական ակտիվներից: Ընկերության հիմնական ֆինանսական պարտավորությունները ներառում են կրեդիտորական պարտքերը, բանկային վարկերը և օվերդրաֆտները: Սույն ֆինանսական գործիքների հիմնական նպատակն է հանդիսանում կառավարել կարճաժամկետ դրամական միջոցների հոսքերը և ներգրավել ֆինանսական միջոցներ Ընկերության կապիտալ ծախսումների ծրագրերի համար: Ընկերությունն ունի տարբեր ֆինանսական ակտիվներ, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները, որոնք առաջանում են ուղղակիորեն իր գործունեություններից:

Ռիսկերի ենթարկվածությունը

Հիմնական ռիսկերը, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ Ընկերության ֆինանսական ակտիվների, պարտավորությունների կամ ապագա դրամական միջոցների հոսքերի վրա, շուկայական ռիսկերն են, որոնք ներառում են ապրանքների գնային ռիսկը, արտարժույթի ռիսկը, իրացվելիության ռիսկը և պարտքային ռիսկը:

Ապրանքների գների փոփոխության ռիսկ

Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է գործարքային արժույթների ազդեցության: Այսպիսի ենթարկվածությունն առաջանում է ֆունկցիոնալ արժույթից տարբերվող արժույթներով կատարված գնումների և վաճառքների արդյունքում:

Արտարժույթային ռիսկի ազդեցության հաշվարկի ժամանակ, Ընկերությունը հաշվի է առնում նաև բոլոր այն ակտիվների և պարտավորությունների վրա ազդեցությունը, որոնց մարումը կատարվելու է ֆունկցիոնալ արժույթից տարբերվող արժույթով:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսային ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է շուկայում տոկոսադրույքների փոփոխության հետևանքով: Շուկայական տոկոսադրույքների փոփոխության ռիսկին ենթարկվում են Ընկերության լողացող տոկոսադրույքով երկարաժամկետ պարտավորությունները:

Ընկերությունը տոկոսադրույքի փոփոխության ռիսկը կառավարում է հաստատուն և փոփոխական տոկոսադրույքներով վարկերի և փոխառությունների պրոսֆեյի միջոցով: Ընկերության քաղաքականության համաձայն փոխառությունների **40%-ից 60%-ը** պետք է ունենան հաստատուն տոկոսադրույքներ՝ բացառելով ընդհատված գործունեությանը վերաբերող փոխառությունները: Տոկոսադրույքի ռիսկը կառավարելու նպատակով:

Պարտքային ռիսկ

Ընկերությունը ունի պարտքային ռիսկ՝ կապված մատակարարներին տրամադրած կանխավճարների գծով:

Ֆինանսական գործիքներ և դրամական ավանդներ

Ընկերությունը ունի տրամադրած փոխառություններ:

Ինչ վերաբերվում է ռիսկին այլ ֆինանսական ակտիվների գծով, Ընկերությունը գնահատում է ռիսկերը նվազագույն, քանի որ

Իրացվելիության ռիսկ

Նկարագրել իրացվելիության մակարդակը (կարճաժամկետ, երկարաժամկետ), ինչպես նաև քաղաքականությունը դրա կառավարման

Կապիտալի կառավարում

Ընկերության կապիտալի կառավարման հիմնական նպատակն է Ընկերության հուսալի վարկունակության կայունության և ֆինանսական ցուցանիշների համապատասխան մակարդակի ապահովումն է՝ Ընկերության գործունեության աջակցության և բաժնետերերի շահույթը մաքսիմալացնելու նպատակով:

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

2023 և 2022թթ. Դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիներին կապիտալի կառավարման նպատակներում, բաղաբաղանություններում կամ ընթացակարգերում փոփոխություններ չեն իրականացվել:

Ընկերությունը իրականացնում է կապիտալի վերահսկողություն ֆինանսական լծակի գործակցի միջոցով, որը հաշվարկվում է որպես զուտ պարտավորությունների և ընդհանուր կապիտալի ու զուտ պարտավորությունների հանրագումարի հարաբերակցություն:

14. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից մինչև առդիտորական ստուգումն ընկած ժամանակահատվածում տեղի չեն ունեցել այնպիսի դեպքեր կամ իրադարձություններ, որոնք կարող են էապես ազդել ֆինանսական հաշվետվությանը կամ առանձին հոդվածներին:

Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, այդ ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ գործում են 2020թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Ընկերությունը մտադիր է կիրառել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

Ակնկալվում է, որ ստորև ներկայացված ստանդարտն ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա սկզբնական կիրառման ժամանակաշրջանում:

(բ) ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ը փոխարինում է ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», ՖՀՄՍ-ի մեկնաբանություն 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԼ մեկնաբանություն 15 «Գործառնական վարձակալություն, խրախուսող պայմաններ» և ՄՄԼ մեկնաբանություն 27 «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը» սահմանված վարձակալության հաշվառման ուղեցույցները:

ՖՀՄՍ 16-ը սահմանում է մեկ՝ հաշվեկշռային հաշվառման մոդել վարձակալության համար: Այս մոդելի համաձայն՝ վարձակալը պետք է ճանաչի օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվը, որն իրենից ներկայացնում է ելակետային ակտիվն օգտագործելու իրավունք, և վարձակալության գծով պարտավորությունը, որնիրենից ներկայացնում է վարձավճարների վճարման պարտականություն: Նախատեսված են կամայական բացառություններ կարճաժամկետ վարձակալության և ցածր արժեք ունեցող միավորների վարձակալության համար: Վարձատուի համար հաշվառման ներկայիս մոտեցումը փոփոխվում, նա շարունակում է դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական դասերի:

Ներկա պահին բացահայտված առավել էական ազդեցությունը կայանում է նրանում, որ Ընկերությունը պետք է ճանաչի նոր ակտիվներ և պարտավորություններ գրասենյակի տարածքի գործառնական վարձակալության գծով:

Բացի այդ, կփոխվի վարձակալության այդ պայմանագրերի գծով ճանաչվող ծախսերի բնույթը, քանի որ ՖՀՄՍ 16-ի համաձայն, գծային հիմունքով ճանաչվող գործառնական վարձակալության ծախսերի փոխարեն Ընկերությունը պետք է արտացոլի ակտիվից օգտվելու իրավունքի մաշվածության գծով ծախսերը և վարձակալության գծով պարտավորությունների տոկոսային ծախսերը:

(i) Անցումը նոր ստանդարտին

Որպես վարձակալ Ընկերությունը կարող է՝

- կիրառել ստանդարտը հետընթաց, կամ
- կիրառել ձևափոխված հետընթաց մոտեցում՝ գործնական բնույթի ոչ պարտադիր պարզեցումներով:

Վարձակալը պետք է կիրառի ընտրված մոտեցումը հետևողականորեն իր բոլոր վարձակալության պայմանագրերի համար:

Ընկերությունը պլանավորում է ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառումը 2024թ. հունվարի 1-ին՝ կիրառելով ձևափոխված հետընթաց մոտեցումը: Հետևաբար, ՖՀՄՍ 16-ի կիրառման կումուլյատիվ ազդեցությունը կճանաչվի որպես չբաշխված շահույթի տարեսկզբի մնացորդի ճշգրտում 2024թ. հունվարի 1-ին՝ առանց համեմատական տվյալների վերահաշվարկի:

Նախկինում ՖՀՄՍ 17-ի համաձայն որպես գործառնական վարձակալություն դասված պայմանագրերի նկատմամբ ձևափոխված հետընթաց մոտեցումը կիրառելիս՝ վարձակալը կարող է ընտրել, արդյոք անհրաժեշտ է անցման ժամանակ կիրառել գործնական բնույթի ոչ պարտադիր պարզեցումները: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս գործնական բնույթի ոչ պարտադիր պարզեցումների կիրառման հնարավոր ազդեցությունը:

Ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկվեն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ընկերության գնահատմամբ հետևյալ նոր ստանդարտները, որոնք գործում են 2024թ. հունվարի 1-ին սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- ՖՀՄՄ 15 »Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից ստացվող հատույթ«

ՖՀՄՄ 9 »Ֆինանսական գործիքներ«

Տնօրեն

Լ. Ղոնյան

Գլխ. հաշվապահ

Ն. Հարությունյան

29.03.2024թ.

